№ 247 ՇԱԲԱԹ, 7 ՆՈՅԵՄԲԵՐԻ

1909

ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 7 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 247

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրատան տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տպարանի տէլէֆօն № 228.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԱՌԱՋԻԿԱՅ 1910 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(38-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 ռ., 10 ամսվանը՝ 9 ռ., 9 ամսվանը՝ 8 ռ., 8 ամսվանը՝ 7 ռ., 7 և 6 ամսվանը՝ 6 ռ., 5 ամսվանը՝ 5 ռ., 4 ամսվանը՝ 4 ռ., 3 ամսվանը՝ 3 ռ., 1 ամսվանը՝ 80 կ. և 20 կ. պօստի ծախք։

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և միւնոյն ժամանակ 40 կ. նամակադրոշմ։

Ի նկատի ունենալով, որ ուշ բաժանորդագրվելու պատճառով ստեղծվում են մի շարք տեխնիկական անյարմարութիւններ, որոնք զրկում են խմբագրութիւնը հնարաւորութիւնից յունվարի 1-ից կանոնաւորապէս թերթն ուղարկել բաժանորդներին, ուստի խնդրվում է բաժանորդ գրվել ցանկացողներին վաղօրօք դիմել՝ գրելով հասցէները պարզ և ճշգրիտ։ Հին բաժանորդներից խնդրվում է կպցնել փոխադր. բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

Մեր հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TiFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Այսօր, շաբաթ, նոյեմբերի 7-ին

Տեղի կունենայ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

Երեկոյթին կը նուագեն սազանդարներ։

Ազդ.—Հետևեալ «Ընտանեկան Երեկոյթը» երեքշաբթի, նոյեմբերի 10-ին։

(առ.) 1204. 1—1

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԼՈՒԲ

Շաբաթ, նոյեմբերի 7-ին, երեկոյեան ժամը 8-ին, Բօրսայի շէնութեան մէջ (Արմենական բազար, առն Վարկային Ընկ., Եբհանեան հրապար. ժօռիկ) տեղի կունենայ

ԵՐԵԿՈՅԹ հետևեալ ծրագրով.

1) Իշխ. Գ. Մ. Թումանովի բէֆերատը՝ «Ճշմարտութեան մեծագործների լեկվիդացիան Կովկասում»։

2) Խօսակցութիւն բէֆերատի առիթով։

3) Դրական - երաժշտական բաժանմունք՝ մասնակցութեամբ Ր. Մ. Պրօվիկովի, Մ. Ա. Քալանթարեանի և Իշխ. Վ. Մ. Թումանովի։

Մուտքը անդամների համար ձրի է, իսկ հիւրերի համար՝ 50 կոպ.։

(առ.) 1206. 1—1

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՕՆ

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿ. ԹԱՏՐՕՆՈՒՄ

Հայ դերասանական ընկերակցութիւնը Երկուշաբթի, նոյեմբերի 9-ին, կը ներկայացնէ

Ռուսային անդամ փիլիսոփայութեան դօկտոր Ս. ԹԱՌԱՆԵԱՆ նոր պիէսը

ԱԶՐԱՅԻԼ

(Մահվան հրեշտակ)

Ցրպի-կօմեդիա 4 գործողութեամբ։

Մասնակցում է ամբողջ խումբը։

Տեղերի գները սովորական են

Սկիզբն ուղիղ ժամը 8-ին

Բեմադրեցը՝ տ. ՄԱՅՍՈՒՐԵԱՆ

Ազդ.—Պատրաստվում է ներկայացնելու «Սեվերօ Թօրելլի»—Ֆ. Կոպպէի, «Նոր կանչ»—Պոտապենկոյի։

(շ. կ.) (առ.) 1207. 2—1

ԺՈՂՈՎՐԴԻ ՄԷՋ

I

Եթէ մի օտար մարդ լսէր ժողովրդական այն ճառերը, որոնք արտասանվում են մեզանում, կարող էր կարծել, թէ այժմ ժողովրդական խաւերում, մասնայլ զանազան շրջանների մի ստուար բազմութիւն։

Իսկ ի՞նչ է ասում իրականութիւնը։

Մի տխուր և սարսափելի տխուր բան—այն, որ ինտելիգենտ մարդը ոչ միայն չէ մտնում մեր երկրի այն անկիւնները և խորշերը, ուր ապրում է ժողովրդական մասսան, այլ ընդհանրապէս գիւղերում եղած փոքր ի շատ աչքի ընկնող այժերն էլ թողնում են գիւղական աշխարհը և փախչում դէպի քաղաքները, դէպի երկաթուղիները, նաւահանգիստները, դէպի արտասահման։

Այդ երևոյթը ցոյց է տալիս, որ մեզանում ինտելիգենտ ճառախօսի կամ ժողովրդասէրի եռանդը հասարակ բարեմասնութիւնների շրջանակից այն կողմը չէ անցնում։ Ոչ ոք չէ ուզում տանել գաւառական և գիւղական կեանքի անյարմարութիւնները, ոչ ոք չէ ցանկանում իր ձեռքով փորձել բարեփոխելու այն իրականութիւնը, որը ձեռնհաս և զեկավարող ցուցումների է սպասում կարող անձերի կողմից։

Բժիշկը, իրաւաբանը, մտաւորականը խուսափում են գիւղական և գաւառական աշխարհից և ջանք չեն գործադնում այնպիսի սերտ կապ հաստատել տեղական ազգաբնակութեան և իրանց միջև, որ ինտելիգենտ գործողի ներկայութիւնը գաւառական այդ աշխարհում դառնար ժողովրդի համար անհրաժեշտութիւն և կենսական անհերքելի մի պահանջ։

Եւ յաճախ մենք զարմանում ենք, որ մեզանում ժողովրդական մասսան դանդաղ է զարգանում և առաջ գնում, որ նրա առօրեայ կեանքը մնում է հին աւանդական կաղապարների մէջ, որ նրա մտաւորութիւնը չէ բացում նոր շաւիղներ բարեփոխութիւնների համար։

Նոյն իսկ այն բացառիկ դէպքերում, երբ մեր երկիրը ենթարկվում էր սովի, երկրաշարժի, զանազան հիւանդութիւնների ազէտին, շատ մեծ դժուարութեամբ էին գտնվում անհատներ, որոնք նոյն իսկ բաւարար վարձատրութեամբ գնային դէպի գաւառական խուլ անկիւնները։

Այն գեղեցիկ օրինակը, որ մենք տեսնում ենք հիւսիսում, մեզանում չէր գտնում հետևողներ։ Եւրոպական Ռուսաստանի իրականութիւնից մենք կարող էինք թուել շատ դէպքեր, երբ ժողովրդական ազէտը դէպի ինքն էր գրաւում ինտելիգենտ գործողների խորին ուշադրութիւնը, և հարիւրաւոր մարդիկ շտապում էին դէպի այն տեղերը, ուր նրանց ջանքերը և օգնութիւնը հարկաւոր էին ազէտի դէմ մաքառելու և նրա կործանիչ ոյժը թուլացնելու ու վերացնելու։

Եւ ոչ միայն բացառիկ դէպքերում, այլ և սովորական ընթացիկ կեանքի մէջ մենք տեսնում ենք այնտեղ ինտելիգենտ գործողների, որոնք բաւականանում են չափաւոր վարձատրութեամբ և տարիներ շարունակ մնում են գործելու այնպիսի խուլ անկիւններում, որոնք յաճախ աւելի ևս ծանր պայմաններ են ներկայացնում, քան մենք տեսնում ենք մեր երկրի շատ տեղերում։

Այո, մեզանում գաղափարականութեան հաւատացումների հետ չենք տեսնում զուգընթաց անձնուէր գործունէութիւն՝ իրականացնելու գաղափարական պահանջները։

Եւ շատ սակաւ է այն անձնաւորութիւնների թիւը, որոնք իրապէս գործում են ժողովրդական մասսայի մէջ և մասսայի համար։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 4 նոյեմբերի

Պաշտօնական։ Բարձրագոյն հրաման Ֆինլանդիայի ներկայ հերթական սէյմը արձակելու և նոր սէյմ գումարելու մասին։

«Ողորմութեամբն Աստուծոյ, Մենք, Նիկոլայ II, Կայսր և Ինքնակալ Համայն Ռուսաստանի, Թագաւոր Լեհաստանի, Մեծ Իշխան Ֆինլանդիայի և այլն, և այլն, և այլն, յայտարարում ենք Ֆինլանդական Մեծ Իշխանութեան Մեր բոլոր հաւատարիմ հպատակներին։

«Հրամայելով կատարել սէյմի պատգամաւորների նոր ընտրութիւններ, Մենք բարւոք գտանք արձակել այժմեան սէյմը այս տարվայ նոյ. 5-ին և գումարել, համաձայն 1906 թ. 7 յուլիսի Մեր հաստատած սէյմական կանոնադրութեան 18-րդ յօդուածի, նոր սէյմ 1910 թ. մարտի 1-ին, նոր տոմարով, Հելսինգֆօրս քաղաքում, ուստի և պատգամաւոր ընտրվողները պէտք է գան յիշեալ ժամանակ Հելսինգֆօրս քաղաքը իրանց պարտականութիւնները կատարելու համար սէյմական կանոնադրութեան համաձայն»։

Իսկականի վրա Ն. Կ. Մ. ձեռքով ստորագրված է «ՆԻԿՕԼԱՅ»։

Լիվադիա.

4 նոյեմբերի 1909 թ.

Ճշդեց մինիստր ստատս-սեկրետար Լանգօֆ։ (Հ. Գ.)

—

Գեոերբուրգ.—Լուրերին նայած Սաօլիպկինը Դրիմից բերել է Բէկմանի հրաժարականը։ Նրա տեղ նշանակվում է Կլէյգէլսը։

Պետական պաշտպանութեան դումայական մասնաժողովում Մարկով 2-դ առաջարկեց ցանկութիւն յայտնել գադարեցնելու հրէաներին զինուորա-բժշկական ակադեմիայում և զինուորա-բժշկական պաշտօններում ընդունելու սովորութիւնը։ Առարկեցին Բօբրինսկին և Խվոշչինսկին։ Մասնաժողովը Գուչկովի հետ անդին մեծամասնութեամբ ընդունեց Մարկովի առաջարկութիւնը։

Պետական բանկի կառավարիչ, լուրերի համաձայն, նշանակվում է առևարի նախկին մինիստր Շիպովը։

Տեղեկութիւն է ստացվել Պոլտավայի սեմինարիայի անկարգութիւնների մասին։ («Բ.»)

—

Պետերբուրգ, 5 նոյեմբերի

Բարձրագոյն կարգադրութեամբ Ֆինլանդական սէյմի նոր պատգամաւորների ընտրութիւնները սկսվելու են 1910 թ. փետրվարի 1-ից նոր տոմարով։ (Հ. Գ.)

—

Ստօկհօլմ.—Նոբէլի մրցանակը ստանալու շանսեր ունեն Սուէզը, Դէսուրնէլը, Կոնտանը և Լեվ Տօլստոյը։ («Բ.»)

—

Բերլին, 5 նոյեմբերի

Երեքշաբթի օրվանից մինչև չորեքշաբթի երեկոն ամբողջ Գերմանիայում անցաւ ձիւնախառն փոթորիկ։ Շատ տեղերում դադարել են հեռագրական հեռախօսի և երկաթուղային հաղորդակցութիւնը։ Քաղաքներում և գիւղերում խոշոր վնասներ են պատճառել։ (Հ. Գ.)

—

Բլագովէշչենսկ, 5 նոյեմբերի

Երէկ ցերեկով ինտենդանտական պաշտօնեաներ Լիսովսկու և Բիբայեվի ընակարանը ներս խուժեցին 9 դիմակոված զինված կողոպտիչներ, ոտիպեցին պաշտօնեաներին չէկեր գրել, փակեցին ներքին յարկում 7 պաշտօնեաներին, ընակարանի սպասաւորուհուն և ծառային, գիմեցին պետական բանկը, ստացան չէկերով 170,000 ռ. և անյայտացան։ (Հ. Գ.)

—

Մինխեն, 5 նոյեմբերի

Վերին պալատ։ Քննվում է ներքին պալատից միաձայն ընդունված առաջարկութիւնը՝ հրաժարվել Ռուսաստանի հետ կապված պայմանագրից յանցաւորներին յանձնելու մասին։

Զեկուցանող Ֆոն-Աուէրը առաջարկեց մերժել այդ առաջարկութիւնը, որովհետև նա վերաբերում է մի խնդրի, որ չէ մտնում պալատի իրաւասութեան շրջանը, և որովհետև առհասարակ ոչ մի նիւթական հիմունք չէ ներկայանում համաձայնութիւնից հրաժարվելու համար, հրաժարվեն, ընդհակառակը, կարող է անքաղաքավարութեան մի դէպք համարվել Ռուսաստանի նկատմամբ։ Պայմանագիրը Ռուսաստանը կատարում է մեծ լոյալութեամբ և ուշադիր վերաբերմունքով դէպի Բաւարիայի իրաւական հարցերը։ Պայմանագրի գոյութեան 23 տարվայ ընթացքում հարկ եղաւ յանձնել միայն մի քրէական մարդասպանի։

Միւս կողմից պայմանագիրը անկասկած կազատէ Բաւարիան Ռուսաստանի յեղափոխականների և անիշխանականների հաւաքատեղին դառնալուց։

Մինիստր-նախագահը վերջում յայտնեց, որ նրա բացատրութիւնները կը դրդեն աւելի արդարացի գնահատութիւն տալու իրերի դրութեանը և կընդունվի, որ բաւարական կառավարութեան գործելակերպը այս ամբողջ հարցում եղել է կօրրէկտ և անբասիր։

Պոդէվիլսի ճառից յետոյ պատգամաւորների պալատի առաջարկութիւնը միաձայն մերժվեց։ (Հ. Գ.)

—

Բրիւսէլ, 5 նոյեմբերի

Պատգամաւորների պալատը ձեռնարկեց զինուորական բարեկարգման օրինագծի քննութեանը և ընդունեց սոցիալ-դեմոկրատների բանաձևը, որ ասում է՝ «ամէն մի ընտանիքին մի զինուոր»։ (Հ. Գ.)

—

Սօֆիա, 5 նոյեմբերի

Մինիստր-նախագահը ճառ արտասանեց գահական ճառին պատասխան ուղերձ ուղարկելու առիթով։

Մինիստրի կարծիքով՝ Բալքանեան ամբողջովին պարտական է Ռուսաստանին և իր Միապետին բարդ հարցերի լուծման համար։ Խօսելով Թիւրքիայի վերաբերութեամբ, մինիստրը մատնանշեց, որ Թիւրքիայում ապրող բալքանների դրութիւնը այնքան էլ նախանձելի չէ, և յոյս յայտնեց, որ հաւանօրէն նրանց իրաւունքներն էլ կը հաւատարվեն միւս ազգութիւնների իրաւունքներին։

Անցնելով Սերբիային, մինիստրը յայտնեց, որ յարաբերութիւնները Սերբիայի հետ պէտք է սրտագին լինեն, իսկ ինչ վերաբերում է Մակեդոնիային, անհրաժեշտ է, որպէսզի Թիւրքիայի առանձին ազգութիւններին հնարաւորութիւն տրվի կանոնաւորել կրօնական հարցերը առանց Սերբիայի և Բալքարիայի միջամտութեան։ (Հ. Գ.)

—

Բուդապէշտ, 5 նոյեմբերի

Կայսրը հրամայեց ունգարական խորհրդին գումարվել Վիէննայում դալիք շաբաթվայ սկզբում։ Նիստը տեղի կունենայ կայսրի նախագահութեամբ։ (Հ. Գ.)

—

Վիէննա, 5 նոյեմբերի

Աւստրների պալատում Բինէրդը ճառ արտասանեց ներքին քաղաքականութեան մասին։ Նա ասաց, որ կաբինէտը պատրաստ էր հրաժարական տալ, եթէ վստահ լինէր, որ նրա հրաժարականը կը վերականգնէր կարգ ու կանոնը։

Ապա Բինէրդը հերքեց այն անհիմն նկատողութիւնները, իբր կառավարութիւնը վարում է հակասուսական և հակապարլամենտական քաղաքականութիւն։ (Հ. Գ.)

—

Թէհրան, 5 նոյեմբերի

Մէջլիսը զբաղված է պատգամաւորների լիազօրութիւնների ստուգութեամբ։ Փոխ-նախագահներ ընտրվեցին Խուսիդն Կուլի-խան, Նաւաբ և Մուստէշար-ուդ-Դօվլէ։

Մինիստրութիւնը հրաժարական տուեց։ (Հ. Գ.)

—

Լօրդերը վճռեցին մերժել բիւջէը։ Այդ մասին ամենակարճ կերպով հաղորդում է «Times» լրագիրը, որին, որպէս պահպանողական լիբերների կիսապաշտօնական օրգանի, չէ կարելի չը հաւատալ։ «Ֆինանսական բիւրի երկրորդ ընթերցանութեան ժամանակ,—գրում է լրագիրը,—կը ժայռվի դիմադրական կուսակցութեան պաշտօնական առաջարկութիւնը, որ հակառակ է բիւրին։ Ուստի բիւրի մերժումը կարելի է համարել անխուսափելի։ Դիմադրական կուսակցութեան առաջարկութեան մէջ, շատ հաւանական է, կարճատօտ և պարզ կերպով մատնացոյց կանվի այն բանի վրա, որ լօրդերի համար անհնար է ընդունել մի այդպիսի բիւր, նախ քան երկիրը տուած կունենայ իր կարծիքը յայտնելու դրա մասին։

Որովհետև բիւջէի երկրորդ ընթերցումը լօրդերի ժողովում կը սկսվի նոյեմբերի 9-ին (22-ին), հետևաբար, նոյեմբերի 10-ի և 15-ի մէջտեղը կարելի է սպասել դիմադրականների վերոյիշեալ որոշման իրագործումը։ Կառավարութիւնը այն ժամանակ կը լուծէ համայնքների ժողովը այն մտադրութեամբ, որ նոր ընդհանուր ընտրութիւնները տեղի ունենան յունվարին։ Այդ ընտրութիւնները կը վճռեն ոչ միայն բիւջէի և կուսակցութեան վիճակը, այլ և այն, թէ անգլիական երկու պալատներից որը պէտք է գերակշռող դեր ստանձնէ ապագայում։

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Կ. Պոլիս.— Ադանայում մահվան պատապարված հինգ հայերի մահվան պատիժը փոխարինվեց տաժանակիր աշխատանքներով։

Ադանայի հեղեղի պատճառած վնասները հասնում է չորս միլիոնից աւելի ռուբլու. մօտ 500 տուն քարուքանդ են եղել։

Պարսից դեսպանը ժողովրդական ճաշ տուեց մէջլիսի բացման առիթով։ («Բ».)

—

Թիւրքիայից «Ростовъ» շոգենաւով Բաթում եկած ճանապարհորդները պատմում են այն սոսկալի դժբաղդութեան մասին, որ պատեց Տրապիզոնի բնակիչների գլխին։

Ուրբաթ, հոկտ. 30-ին, ուժեղ հեղեղից Գուլգինդերէ գետը անցել է քաղաքի միջով։ Գետափը ծածկվում է ջրով, որի ժամանակ մահմեդականների մօտ 50 տներ մասամբ ջուրը տանում է, մասամբ էլ կործանում։ Պատուղների ասելով, փլված տների տակ մնացել են անգիտի թիվ մարդիկ, որոնց ճիշդ քանակը դեռ անհնարին է որոշել։ Ծովափին գտնվել են 20 դիակներ։ («Բ. Բ.»)

—

«La Turquie» լրագիրը հաղորդում է, որ Թիւրքաց ներքին գործերի մինիստրը տեղեկութիւններ պահանջած լինելով Բիթլիսի և Վանի իշխանութիւններից, թէ ճիշդ է, որ կոտորածներ են տեղի ունեցել այդ քաղաքներում, Բիթլիսի վալին մի հեռագրով հերքում է վճռապէս այդ լուրը և աւելացնում է, որ այդ լուրերը ծագել են այն ազբիւրից, որ տեղական իշխանութիւնները հալածել են Բէբիր Մալոր և Գենվօ Բաբոր աւազակներին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԳԻՒՂԱՏՆ.-ՏՆԱՅՆԱԳ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Հինգշաբթի, երեկոյեան ժամը 8-ին, Կովկ. Գիւղատնտ. Ընկերութեան դահլիճում կայացաւ Թիֆլ. Հայոց Գիւղատնտ. և Տնայնագործ. Ընկ. ընդհանուր ժողովը՝ ներկայութեամբ 60 անդամների և հիւրերի։

Նախագահում էր Ա. Քալանթար։ Վարչութեան քարտուղար Ա. Աթանասեան կարդաց ընկերութեան ամարային գործունէութեան հաշուետութեան շարունակութիւնը։ Քննութեան առնվեց Պետերբուրգում առաջիկայ փետրվարին կայանալիք Համառուսական Տնայնագործական Համագումարին մասնակցելու խնդիրը։ Ժողովը որոշեց, որ ընկերութիւնը մասնակցէ այդ համագումարին առաջ քաշելու համար մի շարք հարցեր, որոնք վերաբերվելու են տնայնագործութեան զարգացմանը Անդրկովկասում։

Այնուհետև խնդրեցին վարչութեան նախագահին թողնել դահլիճը, և ժողովին նախագահեց Յ. Փիրալեանը։ Սա յայտնեց, որ նոյեմբերի 21-ին տօնվելու է Ա. Քալանթարի գիւղատնտեսական 30-ամեայ գործունէութեան յօբելեանը, որին մասնակցե-

լու համար վարչութիւնը կազմել է հետևեալ առաջարկը. ա) յօբելեանի օրը վարչութեանս բոլոր անդամները մի ուղերձով շնորհաւորում են յօբելեարին, բ) յօբելեանից յետոյ հէնց առաջին ընդհանուր ժողովը լինում է ի պատիւ Բալանթարի, նուիրված նրա գործունէութեան գնահատմանը և գ) ընկերութիւնը ի պատիւ յօբելեարի հրատարակելու է գիւղատնտեսական դանազան ճիւղերին վերաբերող մի ժողովածու, ծախսելով դրա վրա ինժ. Վաչեանի կողմից խոստացված 400 ռուբլին։

Սա. Մալխասեան գտնում է, որ այդ գումարը քիչ է լուրջ հրատարակութեան համար, որի կարիքը այնքան զգալի է այժմ, ուստի առաջարկում է, որ ընկերութիւնը իր միջոցներից աւելացնի այնքան, որով կարելի լինի գլուխ բերել իրօք մի շքեղ և բազմազան հրատարակութիւն։

Այդ ուղիով տեղի են ունենում մտքերի փոխանակութիւն, որից յետոյ վճռվում է՝ յանձնել վարչութեանը կազմել մի նախահաշիւ այդօրինակ մի հրատարակութեան և ներկայացնել ընդհանուր ժողովին, որը խոստանում է լրացնել գումարը, եթէ ծախքը լինի մինչև 1000 ռուբլի։

Յ. Աղաբաբ առաջարկում է, որ յօբելեանին շնորհաւորի ոչ միայն վարչութիւնը, այլ և ընդհանուր ժողովի կողմից ընտրված չորս անձինք։

Ժողովը ընդունում է այդ առաջարկը և ընտրում է բժշկապետ Ա. Բաբայեանին, Ալ. Բիշմիշեանին, Վարդապետեանին և Յ. Աղաբաբին։

Առաջարկվում է ընկերութեան ձեռքով բացված և հեմատուրված հատատութիւններից մէկը անուանել Բալանթարի անունով։

Առաջարկը ընդունվում է միաձայն։

Ցանկալի է համարվում կախել Բալանթարի մեծադիր պատկերը ընկերութեան գրասենեակում, հէնց որ այդպիսին կունենայ նա։

Այդ առաջարկը նոյնպէս ընդունվում է։

Դրանից յետոյ զեկուցում է մտնում Բալանթարը, որին ժողովը ընդունում է ծափահարութեամբ։

Քարտուղարը յայտնում է ընդհանուր ժողովի ընդունած որոշումների մասին։ Բալանթարը շնորհակալութեան ճառի մէջ յայտնում է այն միտքը, որ այն պատիւը, որ անում է իրան Հայ Գիւղատն. և Տնայնագործ. Ընկերութիւնը ուսումնասիրել այն կարտոֆելի տեսակները, որոնք յարմար և ձեռնտու են մեր երկրի այս և այն շրջանների համար, կազմել առաջիկայում այդ մթերքի յուսահանդէս և տարածել լաւագոյն տեսակները լեռնային հայաբնակ շրջաններում։

Փիրալեան մի քանի տեղեկութիւններ է հաղորդում գեաօլանի և չումիզայի մշակութեան մասին, որպէս անդամներ թէ մարդկանց և թէ անասունների համար։ Որոշվում է ի պատիւ Բալանթարի տպագրվելիք գիւղատնտեսական ժողովածուի մէջ տալ տեղեկութիւններ նաև այդ բոյսերի մշակութեան մասին։

Այնուհետև ժողովը լսում է Ա. Աթանասեանի զեկուցումը «Զեմստվոների գիւղատնտեսական գործունէութեան մասին»։ Զեկուցումը մանրամասն կերպով քննում է այն միջոցները, որ 45 տարիների ընթացքում ձեռք են առել ռուսական զեմստվոները՝ նպատակ ունենալով տարածել ժողովրդի ստորին խաւերի մէջ գիւղատնտեսական կատարելագործութիւններ։

Զեկուցումը ընդունվում է ծափահարութիւններով և ցանկութիւն է յայտնվում, որ տպագրութեան տալով, հնարաւորութիւն տալ հայ ժողովրդին ծանօթանալ զեմստվային այն խնդիրների հետ, որոնք ուղղված են երկրի տնտեսական դրութեան բարւոքմանը։

Ուղիղ ժամը 11-ին ժողովը փակվում է, որի շարունակութիւնը որոշվում է անել առաջիկայ հինգշաբթի, նոյեմբերի 12-ին, նոյն տեղում։

Ընդհանրապէս նկատելի է, որ Հայ Գիւղատնտ. և Տնայն. Ընկ. ժողովները հետզհետէ զբաւում են բազմաթիւ այցելուներ, մեծ մասամբ Թիֆլիսում ապրող գաւառացիներից և մասնագէտներից։

Վարչութիւնը իր յաճախակի զեկուցումներով, դեմոնստրացիաներով, դասախօսութիւններով, որոնց մէջ շօշափվում են մեր երկրի տնտեսական դրութեան վերաբերող կենսական հարցեր, արդէն գրաւել է հասարակութեան ուշադրութիւնը։

Պէտք է շնորհաւորել այդ ուղղութիւնը և ցանկալ, որ ընկերութեան գաւառական ճիւղերի վարչութիւնները ևս, հետևելով կենտրօնի օրինակին, կազմակերպէին նոյնանման զբաղմունքներ, մանաւանդ աշնան և ձմրան ամիսներում, երբ այնքան բան կայ հաղորդելու, մշակելու, քննելու։ Մենք հաւատացած ենք, որ այդպիսի ժողովները կը լինեն միշտ հետաքրքրական և կը գրաւեն ունկնդիրների և հետաքրքրվողների մեծ բազմութիւն։

Այցելու

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԴԱՒԱՌԻՑ

Հին-Նախիջևան, 2 նոյեմբ.

Թիֆլիսի ուսումնարանական շրջանային ինսպէկտորը Երևանի ուսումն. շրջանի դիրեկտորի հետ անցեալ օրը կրթական մի քանի կարևոր գործերով Նախիջևան էր եկել։ Ի միջի այլոց եկել էր մօտիկից ծանօթանալու մեր քաղաքացիների այն խնդրի հետ, որ ցանկանում են Հին-Նախիջևանում բաց անել պրոգիմնազիա։ Ինսպէկտորը նպատակայարմար է գտել աւելի շուտ բէալական դպրոց բաց անել մեզանում, քան պրոգիմնազիա, որովհետև ամբողջ Երևանի նահանգում միանգամայն գոյութիւն չունի բէալական դպրոց, որ եթէ հասատվելու լինի այստեղ, այն ժամանակ դէպի իրան կը քաշէ ամբողջ նահանգից շատ ուսումնատարաբ աշակերտներ, որից, ի հարկէ, մասամբ կախված կը լինի դպրոցի խաղաղ և արդիւնաբեր բարգաւաճումը՝ գոնէ անտեսական տեսակէտից։ Բացի այդ՝ ինսպէկտորը առանձնապէս շեշտեց, որ «Ալէքսանդրօպոլի ռեալական դպրոցից բացի՝ Երևանի նահանգի միւս քաղաքներում ոչ մի միջնակարգ դպրոց չը կայ», մինչդեռ Վրաստանում այսօր մինչև անգամ գիւղաքաղաքները ձգտում են իրանց միջնակարգ և մասնագիտական դպրոցներն ունենալ և ունեն էլ։

Ահրիմանեան

Շամախի, 3 նոյեմբերի

Նոյեմբերի 2-ի երեկոյեան թեմական պատգամաւորները ժողովեցին առաջնորդարան, ուր թեմիս առաջնորդ Անանիա արքեպիսկոպոսի նախագահութեամբ տեղի ունեցաւ թեմական խորհրդի անդամներ ընտրող ժողովը։

Երկար թեր և դէմ կարծիքներ լսելուց յետոյ, ժողովը անցաւ ընտրութեան գործին գաղտնի քուէարկութեամբ։

ա) Ընտրվեցին խորհրդի անդամներ 4 տարի ժամանակով Բ. Դօլուխանեան, Յ. Քաջազնունի, Տաճատ ք. Մարտիրոսեան և Ա. Վահեանց։

բ) Անձնափոխանորդներ՝ բժ. Թ. Զաքարեան և Հայկ Տէր-Աստուածատրեան։

գ) Վերատուչիչ յանձնաժողովի անդամներ՝ Եղիշէ քահ. Գիզոյեան, Նիկ. Քարամեան և Ֆ. Մարտիրոսեան։

Ժողովն սկսվեց երեկոյեան ժամը 7-ին և վերջացաւ 12-ին։ Այսօր, ամսոյ 3-ին, պատգամաւորները սկսեցին վերադառնալ իրանց տեղերը։

Դերբենտցի

Ցխինվալ, 3 նոյեմբերի

Հոկտեմբերի 31-ին տեղս ժամանեց Պաւէլ Ալէքսէեվիչ Ցէդրօվսկին՝ վերատեսուչ կովկասեան ուսումնարանների. նրա գալու նպատակը՝ տեղիս երեքդասեան դպրոցի օրէնութեանը ներկայ գտնվելն էր, որը տեղի ունեցաւ կիրակի, նոյեմբերի 1-ին, վերատեսչի և խուսն երկսեռ հասարակութեան ներկայութեամբ։

Ցխինվալում այս մի կրթական հիմարկութեան՝ լուսաւորութեան տաճարի աւելացումը պէտք է վերագրել Նիկ. Պաւ. Տէր-Յակոբեանցին, միջնորդ հաշտարար՝ Գ. Դ. Կվալիէվին և Ստեփան Օհանեանցին, որոնց հասարակութիւնը և դիրեկտորը մաղթանքից յետոյ շնորհակալութիւն մատուցին։ Ապա Ցխինվալի հասարակութիւնը անխտիր՝ հայ, վրացի, օս և հրէայ՝ ի միասին ճաշ պատրաստեցին դպրոցի սենեակներում, թէ վերատեսչի և թէ ներկայ եղող հասարակութեան համար. սակայն նախ քան ճաշի նստելը վերատեսուչը միջնորդ հաշտարարի ուղեկցութեամբ այցելեց Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութ. նախագահութեամբ և Գուլիշամբարեանի ծախքերով հիմնված կանանց տնայնագործ. արհեստանոցը *)։ Ապա նստած ճաշի, ամենից առաջ ինքը՝ Ցէդրօվսկին առաջարկեց Թագաւոր Կայսեր արևշատութեան կենացը, որն ընդունվեց «ուրաներով», ապա կովկասեան հոգաբարձուի, նահանգապետի, որոնց խսկոյն հեռագիր ուղարկվեց Ցխինվալի հասարակութեան կողմից, Ցէդրօվսկու, Կվալիէվի և Խիմշիէվի ստորագրութեամբ։ Գ. Դ. Կվալիէվը առաջարկեց յարգելի Ցէդրօվսկու և մի քանի դպրոցական խնամակալների կենացները։ Հասարակութեան ցոյց տուած այդպիսի ուրախութիւնը թողեց վերատեսչի վրա անջնջելի տպաւորութիւն. մանաւանդ հայերէն ու վրացերէն երգերը, որ երգում էր տեղական ուսուցիչը, որից զգացված՝ Ցէդրօվսկին կրկին անգամ առաջարկում է հայոց դպրոցի ծաղկման ու նրա ուսուցիչների կենացը։ Մօտ ժամը 4½-ն էր արդէն, երբ սեղանակիցները ցընդվեցին իրանց տները։ Յովհ. Դաւթեանց

*) Պէտք է նկատել, որ գոյանման արհեստանոցներ Գուլիշամբարեանը բացել է մէկը Գորի և միւսն էլ Սուրամ գիւղաքաղաքում։ Ց. Դ.

ՀԱՅԻ ԲԵՐԲԸ ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏՈՒՄ

Նոր-Բայազէտ, 28 հոկտ.

«Մշակի» № 177-ում հացաբոյսի դրութիւնը նկարագրելիս խոստացել էի տեղեկութիւն տալ նոյնպէս բերքի մասին, և որովհետև ուշացաւ հացաբոյսերի կասելը՝ հետևապէս ուշացաւ նաև մեր տեսութիւնը։ Եւ թէպէտ կլիմայական անբարեյաջողութիւնների շնորհիւ մեր գաւառում դեռ ևս տեղ-տեղ հացաբոյսեր են մնում կասելու, բայց ընդհանրապէս կարելի է մի որոշ գաղափար կազմել այս տարվայ բերքի մասին։

Նախնառաջ պէտք է ասել, որ մեր հացաբոյսը գարնանը տեղ-տեղ մի փոքր մըրսեց և իր նախնական աճեցողութեան շրջանում ծիլերը դեղնեցին, բայց ամառվայ բարեխառն եղանակների ազդեցութեամբ հետզհետէ կազդուրվեցին։ Երաշտը նոյնպէս վատ ազդեց հացաբոյսերի վրա, բայց և այնպէս բերքը բաւարար կարելի է համարել։ Այսպէս, օրինակ, մեզանում անխափար ցանում են գարնանավար. ամեն մի «չվան» հողաբաժինը, որ 2400 քառ. սաժէն տարածութիւն ունի, սերմանում են 2 պ. 20 ֆ. ցորեն կամ 3 պ. գարի։ Այդքան հողամասը բարեյաջող դէպքերում կամ արգասաւոր հողաբաժիններում արդիւնք ունեցաւ 1½—2 սայլ հացաբոյս, որից հացահատիկ ստացվեց իւրաքանչիւր սայլից 7—8 պ. ցորեն, իսկ գարին՝ 10—11 պուդ։ Եթէ ընդունենք մի դեսեատին (6 չվան) տարածութիւն ունեցող մի արտ, որը հացաբոյս է նորատրում 9—12 սայլ, այն ժամանակ հացահատիկ կը ստանանք 63—96 պ. ցորեն, իսկ գարու արդիւնքը պէտք է հաշուել մօտաւորապէս 1½ անգամ աւելի ցորենից։ Ուրեմն մի դեսեատին հողաբաժինը, որ սերմ է վերցնում տեղ. սովորութեան համաձայն 15 պ. ցորեն և 18 պ. գարի (6 չվան՝ 2 պ. 20 ֆ. ցորեն կամ 3 պ. գարի ամեն մի չվանը), արդիւնարերել է այս տարի 63—96 պ. ցորեն և կամ 95—130 պ. գարի։ Կամ ուրիշ խօսքով՝ պարարտ հողաբաժիններում ստացվեցին 6½%, իսկ ցածր—անարգասաւոր—արտերում՝ 4½% ցորեն, իսկ գարին պարարտ մասերում արդիւնք է ունեցել 7¼%, ցածր հողամասերում՝ 6½%։

Սակայն ևս այս արդիւնքի քանակը վերցնում եմ հողաբաժինների առաջին տեսակից, այն է հերկված և պարարտացված տափերի հաշուով, մինչդեռ կան նաև արտեր, որոնք անցեալ տարիներում ցանվելով, յոգնած և ժամանակի ընթացքում կորցրած լինելով իրանց յատկութիւնը՝ արդիւնք ունեցան միմիայն 2—3% սերմի հետ հաշուած։ Եւ դա այնքան էլ չէ կարող վարձատրել հողագործի դժոխային աշխատանքը, որ նա անխիր դնում է թէ պարարտ և թէ անպարարտ հողամասերի վրա հաւասարաչափ։ Բայց և այնպէս մեծ յանցանք գործած կը լինենք, եթէ ասենք, որ այս տարի հացի արդիւնաբերութիւնը վատ է կամ անարգասաւոր։ Մենք աւելի ուրախ կը լինենք և մեր հողագործութիւնը բոլորովին վարձատրված, երբ մեր արդիւնքը անաբատ, առանց փչանալու տուն գար։ Սակայն բնութիւնը այն աստիճան դաժան էր, որ կալոցին, ամբողջ 2 ամսվայ ընթացքում, մի անուշ օր չը տեսաւ մեր հողագործը, ուստի ամբողջ հացաբոյսը և այլ արմտիքը անընդհատ անձրևի տակ փչացան, ածխացան և կորցրին թէ իրանց որակութիւնը և թէ քանակութիւնը... Բացի այդ՝ շատ հացահատիկներ ստացվեցին խառն «մրիկ» (головня) կոչված հատիկների հետ, որոնք թէ սնացնում են հացը և թէ իջեցնում ցորենի գինը։

Այս տարի աւելի արդիւնք ունեցան ձիթապտուղները՝ կտաւատ, սորեկ և այլն, որոնք նուազ և կարճ հասակ ունէին, համեմատած հացաբոյսերի հետ։ Չը նայած որ այդ ձիթապտուղները աւելի թանգ գին ունեն մեզանում և աւելի օգտաւէտ են միւսների վերաբերմամբ (ցորենի, գարու և հաճարի), սակայն դրանցից այնքան չէ ցանվում, որքան միւս հացահատիկները, գլխաւորապէս այն պատճառով, որ ձիթապտուղների համար հարկաւոր են առանձին, «խամ» հողաբաժիններ, որոնք ազատ են լինելու հացահատիկների ցանքերից, իսկ առանձին՝ ազատ՝ հողեր, յայտնի է, մեզանում չը կան։ Եթէ համեմատելու լինենք ձիթապտուղների այս տարվայ բերքը անցեալ տարվայ արդիւնքի հետ, կը տեսնենք, որ այս տարի կիսով չափ պակաս է բերքը, մինչդեռ հացահատիկները, ընդհանրապէս, այս տարի աւելի արգասաւոր բերք ունեն, քան անցեալ տարի։

Գ. Սինանեան

ՎԵՐՋԱՊԷՍ ՎՃՌՎԵՑ

Կարս, 28 հոկտեմբերի

Մի շատ ծանր հարց, մի հրատապ կենսական խնդիր սոյն տարվայ յունվարից մինչև ամսոյ 24-ը զբաղեցնում էր Կարսի ազգաբնակութեանը։ Առաջ բերենք իրողութիւնը։ Մեր քաղաքի դանազան ազգութիւններից բաղկացած մօտ 150 անձինք 10-ական ռուբլի տարեկան նպաստ վէր գալով մի ընկերութիւն են կազմել, 64 յօդուածից բաղկացած մի կանոնադրութիւն հաստատել, 5 սենեակից բաղկացած մի տուն են վարձել՝ կարտ, նարդի և բիլիարդ խաղալու համար։ (Փակագծի մէջ ասենք, որ նարդի խաղացողներից մէկն էլ ես եմ)։ Այս տան անունը դրել են ժողովարան, 10 ր. տուողն էլ կոչվում է «չլէն»։ Ամսոյս 29-ին մի ազգակալից ժողով էր։ Նախագահի սեղանը ծածկված էր սպիտակ սաւանով, զարդարված էր ոսկեգոյն ժամակալներով. սեղանի վրա դրված էին թղթեր, գավթարներ, ջրի գաւաթ և այլ հարկաւոր իրեր։ Աւետիսը գանը խփելուն պէս բոլոր խաղացող չլէնները կիսատ թողին իրանց սրբազան գործերը և հաւաքվեցին դահլիճում, բռնեցին իրանց տեղերը։ Նախագահը ժողովը բացված յայտարարեց և կարդաց հարցին վերաբերեալ յայտարարութիւններ, բողոքներ, զեկուցումներ։ Սկսվեց մի տաք վիճաբանութիւն, մի կրքոտ ընդդիմախօսութիւն, մի բոցավառ, կրակոտ փաստաբանութիւն։

Ընթերցող, երևի հարցնում ես՝

— Ադանայի կոտորածի մասին խորհրդածութիւն էր։

— Ոչ։

— Կարսում ինքնավարութիւն մտցնելու համար էր։

— Ոչ, ազիզ, ոչ։

— Երևի դպրոցների բարեկարգութեան մասին էր։

— Ամենևին ոչ։

— Տրակտիրներում, սրճարաններում գիշերները խստագոյն կերպով պատժելու համար էր։

— Չէ, ազիզ, չէ. մենք էլ ենք խստագոյն խաղում. դա ինքնակար չէ։

— Այս տարի շատ ազգատ աշակերտներ ուսման վարձի պատճառով Թեոդոսիայի փողոցներում։ Երևի ուզում են գրանց օգնել։

— Չէ, ազիզ, չէ. կլուբը այդպիսի դատարկ հարցերի մասին մտածելու ժամանակ չունի։ Բարձր, բարձր, նշանաւոր հարց է...

Դէ լսեցէք, ասեմ։ Կլուբի չլէն Լիբարիա Թահիրեանցը, մի ազգատ գրագիր, ասանց իր չափը ճանաչելու, համարձակվել է Յ. Պապոյեանցի հետ պրէֆերանս խաղալ և տարվել է 7 ր.։ Երկու ժամ տաք վիճաբանութիւնից յետոյ, Պապոյեանցի 7 մանէթանոց բոցոքը առանց հետևանքի թողին, որովհետև Պապոյեանցը դանոսաը կորցրել էր։

Խոշոր հարց է, չէ՞։

Սարիբեգ Տէր-Միքիսեդէկեան

ՌՈՒՍ-ՖԻՆԼԱՆԴԱԿԱՆ ՄԱՍՆԱԾՈՂՈՎ

Հոկտեմբերի 31-ին Մարիինսկի պալատում կայացաւ Բարձրագոյն հաստատված յատուկ մասնաժողովի նիստը նոր կանոնների մի նախագիծ մշակելու համար Ֆինլանդիային վերաբերող հասարակական օրէնքների հրատարակութեան կարգի մասին։

Այս մասին հաղորդեց նաև Հեռագրական Գործակալութիւնը։

Այժմ «Голосъ Москвы» լրագիրը տալիս է Դէյտրիխի, Կօրէվոյի, Մեասօէդովի, Բօրոդկինի և Նակոնեչիօվի ճառերի խմատը։

Նախ լրագիրը բերում է ֆինն անդամների կարծիքները. «1809 թուին Ֆինլանդիան միացվեց Ռուսաստանին, երբ Ալէքսանդր I Կայսրը երկրի համար հաստատեց առանձին սահմանադրութիւն, մտցնելով նրա մէջ ամեն տեսակ օրէնսդրութիւն, դատաւորութիւն և կառավարութիւն, ըստ որում յիշեալ սահմանադրութիւնը կարող է փոխվել միայն ֆինլանդական ժողովրդական ներկայացուցչութեան համաձայնութեամբ։ Միևնոյն ժամանակ ֆինն անդամները պարզեցին մանրամասնօրէն, թէ ինչ պէտք է մտցնել նոր օրէնքի մէջ։ Նրանում պէտք է պարունակվեն գործող կանոնադրութիւնները։

Դէյտրիխը իր ճառում հերքեց ֆինն անդամների ելակէտը, մատնանշեց այն հանգամանքը, որ նրանց բոլոր եղբակացութիւնները հիմված են երբէք գոյութիւն չունեցած, Ալէքսանդր I-ի ստեղծած առանձին ֆինլանդական պետութեան ակտի վրա, ուստի և նրանք պէտք է հերքեն և կտրականապէս պնդեն, որ չը կայ ընաւ այդպիսի քարտէզ, որ վաւերացված լինի Ռուսական Միապետից, որի մէջ խօսվէր Ֆինլանդիայի սահմանադրութեան մասին, և երբէք էլ այդպիսի սահմանադրութիւն գոյութիւն չէ ունեցել. կար յիրաւի նախագիծ, բայց և նախագիծ էլ մնաց։ Ոչ մի մանիֆեստում չէ յիշատակվել, որ ռուս Ինքնակալները պարտաւորութիւն յանձն առնեն և պարտաւորեցնէին իրանց յաջորդներին ևս պահպանել Ֆինլանդիայի պետական իրաւունքները։ «Սակայն նոյնիսկ,—շարունակեց Դէյտրիխը,—եթէ ընդունենք, որ ֆինն անդամները կարող են իրանց իրաւունքները հիմնել առանձին ֆինլանդական պետականութեան վրա անվիճելի պետական ակտերով, այն ժամանակ էլ նրանց հեղինակութիւնները սխալ են։ Բոլորի վրա պէտք է իշխէ պետական օգտի սկզբունքը, եթէ դրա համար հարկաւոր լինեն նոյնիսկ վերացնել առաջուց տրված արտօնութիւնները, որոնք այլև չեն համապատասխանում պետական կեանքի այժմեան պայմաններին. բայց Ֆինլանդիան արտօնութիւններ չունի. Ֆինլանդական անդամների նախագիծը ձեռնմխում է պետութեան ամբողջութեանը և միութեանը. նրանց առաջարկութեան նպատակն է փոխել կայսրութեան պետական կազմը և վերացնել նրա հիմնական օրէնքները»։

Կօրէվոն նոյնպէս ապացուցեց, որ ֆինլանդական անդամների կազմած օրինագիծը հակասում է պետական հիմնական օրէնքներին և նրա մէջ նախատեսված կարգը հնարաւոր է միայն երկու սուվերէն ինքնուրոյն պետութիւնների միջև։

Մեասօէդովը հերքեց ֆինն անդամների կարծիքը, թէ անհրաժեշտ է բոլոր համապետական նշանակութիւն ունեցող օրէնքները անցկացնել սէյմի միջով, գտնելով որ այդ սկզբունքը կը հակասէր հիմնական օրէնքներին։ Ռուսաստանը, իբրև սուվերէն պետութիւն, ինքն է որոշում իր մասերի աւտօնոմիայի սահմանները և սֆերան։

Գեներալ Բօրոդկինը, շօշափելով զինուորական ծառայութեան հարցը, դրականապէս դէմ խօսեց պետական պաշտպանութեան հարցին պատգամաւորների օգնութեամբ։ Երկրի աւտօնոմիան չը պէտք է տարածվի պետութեան զինուորական պաշտպանութեան շրջանը։

Եակունչիկովը, միանալով վերոյշեալ մտքերին, առարկեց Ֆինլանդիայի իրաւունքների դէմ միջամտելու Ռուսաստանի հետ օտար պետութիւնների կնքած պայմանագրերին։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՑԵՂԵՐԻ ՄԻԱՑՄԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆԻՍՏԸ *)

Հոկտեմբերի 1-ին կայացաւ Ռուսաստանի ցեղերի միացման ընկերութեան (Общество единенія народностей Россіи) առաջին ժողովը, որին ներկայ էին՝ Վ. Ա. Մակլակովը, Ն. Վ. Տեսլենկոն, Ա. Ա. Ֆօրշտատերը, պրիվ.-դոցենտ Կ. Ս. Կուզմինսկին, Ա. Ի. Ժամարեանցը և այլն։ Նախագահում էր պրոֆ. Ի. Վ. Վօյլգիը։

Ժողովը մշակեց ծրագիրն այն հարցի, որ իսօվելու էր մօտակայ օրերում կայանալիք ժողովում։ Այլ և անհրաժեշտ համարեց պարզել, իւրաքանչիւր ցեղի միջև, ներկայումս նկատվող գլխաւոր կարիքները՝ հանուր գծերով։

Ճառախօսութիւնը յանձնվեց պրոֆ. Վօյլգիին։ Հետևօրեն լինելու են Մակլակովը ու պրիվ.-դոցենտ Ս. Ա. Կոտլարևսկին։

Ընկերութեան կանոնադրութիւնը քննված է 1909 թ. յունիսի 15-ին և հաստատված՝ Մոսկվայի քաղաքապետի կողմից՝ օգոստոսի 11-ին։

Ընկերութեան նպատակն է՝ ուսումնասիրել պատմութիւնը, կենցաղն ու կարիքները բոլոր այն ցեղերի, որոնք գտնվում են ամբողջ Ռուսաստանում, նպատակ ունենալով նրանց կուլտուրական վերադարձ մերձեցումը, տնտեսական ու իրաւական առաջադիմութիւնն, այլ և համապետական գիտակցութեան զարգացումը, վերաբերվելով կատարեալ յարգանքով իւրաքանչիւր ցեղի անհատական առանձնայատկութիւններին։

Մոսկվայից դուրս ընկերութիւնն ունենալու է իր բաժանմունքները, որոնք կոչվելու են այն քաղաքի անունով, որտեղ հիմնվելու են։

Ընկերութիւնը բաղկացած է պատուաւոր և իսկական անդամներից ու աշխատակիցներից։ Ընկերութեան անդամ են համարվում չափահաս այն տղամարդիկ և կանայք, որոնք իրաւունք ունեն մասնակցելու ընկերութիւնների։

Իւրաքանչիւր անդամ ընկերութեանը վճարում է տարին 5 ր.։ Իսկական անդամներից նրանք, որոնք միանուագ վճարում են 100 ր., ընդմիշտ ազատվում են տարեկան տուրք վճարելուց։

Ընկերութիւնը ներկայումս ունի 120 անդամ։

Հոկտեմբերի 25-ին, երեկոյեան 8 ժամին, գրական-գեղարուեստական ընկերութեան դահլիճում կայացաւ սպասվող ժողովը։ Ներկայ էին 57 անդամ, որոնցից 4-ը՝ կանայք։ Բացի ռուսներից, որոնք մեծամասնութիւն են կազմում, անդամագրված են հայեր, վրացիներ, էստոնեներ, լեռվացիներ, պարսիկներ... Առ այժմ հայերից յիշվում են հետևեալ անունները՝ Ժամհարեանցներ, Սահարբէգեան, Չիվիլեդեան, Ներսիսեան, Բարխուդարեան։

Կանաչ սեղանը գրաւած ունեն ժամանակաւոր յանձնաժողովի անդամները՝ պրոֆ. Վօյլգիը, պրոֆ. Ալ. Սօլոմոն, Թախտաջիվը, Զուգովսկին, Ֆօրշտատերը և Աթանաս Ժամհարեանցը։

Նիստը բաց արեց Զուգովսկին, առաջարկելով ժողովի նախագահ ընտրել պրոֆ. Վօյլգիին, որ, էն սկզբից, մեծ մասնակցութիւն է ունեցել ընկերութեան կազմակերպման գործում։

Բռնելով նախագահական աթոռը, Վօյլգիը կարդաց որոշված ճառը, ցաւ յայտնելով որ մամուլի մի յայտնի տեսակը, նորակազմ ընկերութեան ձեռնարկութեան մէջ, տեսնում է բոլորովին հակառակ նպատակ, քան այն, ինչ որ նախագծված է, այն է՝ անջատականութիւն (сепаратизмъ)։ Իբր թէ ոչ-ռուս ցեղերը միանալու են՝ հանուր ոյժերով հրապարակ նետվելու ռուս պետութեան դէմ։

*) Տես «Մշակ» № 214, «Կարևոր մերձեցում», և № 245.

Շեշտեց, որ այդպիսի մամուլի շնորհիւ էր, որ Ռուսաստանում սարքվեցին ամենքիս յայտնի՝ հրէական ու հայկական պոգրոմները, որտեղ իրար դէմ դուրս եկան՝ զարերով կողք-կողքի ապրող դրացի ու բարեկամ ժողովուրդները։ Այդ մամուլի շնորհիւ է, որ թէ Լեհաստանը ձգտում է զատել անկախ թագաւորութիւն (королевство)։ Իսկ հայերն աշխատում են ստեղծել հայկական թագաւորութիւն, հասցնելով նրա սահմաններից մէկը Բոստովին, և այլն։ Լեհացին ուսի ժասին բոլորովին աննպատակ գաղափար ունի ու խորշում է նրանից։ բայց, գալով Մոսկվա, միանգամ ն փոխում է իր կարծիքը։ «Ես չէի կարող այստեղ այսպէս խօսել,—ասաց ճառախօսը,—եթէ ինքս, տարիներով, ապրած չը լինէի Լեհաստանում»։

Կարճ։ Նրա ամբողջ ճառը տոգորված էր այն ցանկութեամբ, որ Ռուսաստանի բոլոր ոչ-սուս ցեղերը ճանաչվեն ու գնահատվեն տիրող տարրի կողմից, ինչպէս պէտք է, չը մոռանալով վերաբերվել նրանցից իւրաքանչիւրի անհատական առանձնայատկութիւններին՝ կատարեալ յարգանքով։

Դրանից յետոյ, երևի, Մակլակովի ու Կօտլարեվսկու բացակայութեան պատճառով, ժողովը զբաղվեց վարչութեան անդամների, գանձապահի և հաշուեհսների ու նրանց փոխ-անդամների ընտրութիւնով, որ տեւեց մօտ մի ժամ։

Զունենալով ձեռքի տակ բոլոր ընտրվածների անունները, կասեմ միայն, որ ոչ-սուսներից ընտրվեցին միաձայն, այսինքն՝ բոլոր 57 ձայնով, պրոֆ. Ալ. Խախանով, Ալ. Զիվելեգեան և Աթանաս Ժամհարեանց—վարչութեան անդամներ ու գանձապահ։

Ժամը $10^1/_2$-ին նիստը յայտարարվեց՝ փակված։ Է. ք. Ն.

ՇԱԼԵԱՊԻՆ ԵՒ ԴԻԴՈՒՐ

Մոսկվա, 16 հոկտեմբերի

Շալեապին և Դիդուր,—ահա երկու խոշոր երաժշտական ոյժ, երկու հռչակաւոր բառ, երկու տիտան՝ գեղարուեստի այդ ճիւղում։

Շալեապին վաղուց ծանօթ է հայ ընթերցողներին, քանի որ շատ է գրվել և խօսվել նրա հանճարի, նրա վաստակած փառքի մասին։ Նրա անունը ժողովրդական է, նա ժամանակակից ռուս նշանաւոր երգիչներից մէկն է։ Ո՞վ չը գիտէ, որ նա տարվայ ընթացքում միայն 40 անգամ է հրապարակ դուրս գալիս, ամեն անգամ ստանալով 1000 ռուբլի։ Մենք, ի հարկէ, չենք խօսում նրա բենեֆիսների մասին, որոնցից իւրաքանչիւրը տալիս է 15—20 հազար ռ.։ Շալեապինը հասարակութեան սիրելին է. նա վաղուց յայտնի է իր մշակված ձայնով, իր ժողովրդականութեամբ։ Կարիք կայ յիշելու, որ նրա ձայնը տարեկան մօտ 100,000 ռուբլի արդիւնք է բերում իրան՝ Շալեապինին։ Եւ, վերջապէս, մթթէ հարկ կայ կանգ առնելու նրա համաշխարհային հռչակի, նրա համատարած անուան վրա։ Յիշենք նրա տարած յաղթանակը Միլանի «Scala»-ի հասարակութեան առաջ, այն հասարակութեան, որ այնքան խիստ և անողոք է հասարակական գործիչների վերաբերմամբ։

Կարելի է, գիտեմ, շատ գրել Շալեապինի նման մի մեծ անձնաւորութեան մասին, բայց ես, բարեպատեհ չը համարելով այդ, բաւականանում եմ այսքանով առ այժմ։

Իսկ ո՞վ է Դիդուր։ Ադամօ Դիդուր իտալական երաժշտութեան ժամանակակից կօրիֆէյներից մէկն է։ Նա նորերս գալով Ռուսաստան՝ առաջին անգամ հրապարակ եկաւ Պետերբուրգի հասարակութեան առաջ, ուր, ինչպէս մայրաքաղաքի թերթերը հաղորդեցին, ունեցաւ կատարեալ աջողութիւն։ Այնուհետև նա հանդէս եկաւ մեզ մօտ, Մոսկվայում, «Մեֆիստոֆելի» մէջ։ Նկատենք, որ տոմսակների գները շատ զգալի կերպով բարձրացված էին. և դա շատ հասկանալի է։ Ամեն տեսակ լեգէնդներ, շատ անհաւանական լուրեր մինչև օրս տեղ էին գրաւել մամուլում Դիդուրի մասին։ Բաւական է յիշել, որ նա «բասերի թագաւոր» է կոչվում և ստանում է հակայական հօնօրար ամեն անգամվայ համար, մի հօնօրար, որպիսին Շալեապինն անգամ չէր ստացել իր կեանքի և գործունէութեան ժամանակաշրջանում։

Բայց որքան խիստ մեծ եղաւ հասարակութեան զարմանքը, երբ նա, ընդհակառակը, այլ բան տեսաւ «Մեֆիստոֆելի» մէջ։ Դիդուր, հէնց սկզբից ևեթ, սառեցրեց հասարակութեանը։ Այնտեղ, ուր նա պէտք է ցոյց տար իր ձայնի ամբողջ կայտառութիւնը, իր ընդունակութիւնների ամբողջ փայլը, իր հանճարը, ահա այդտեղ նա կատարելապէս հիասթափեցրեց հասարակութեանը։ Նա չը կարողացաւ արդարացնել հասարակութեան այն յոյսերը, որոնք դրված էին նրա վրա։

Դիդուրի ձայնի տեմպրը մի կողմ թողնելով, պէտք է ասենք, որ նրա ձայնը տեղ-տեղ, մանաւանդ բարձր նօտաներում, տատանվում էր, որ նա յաճախ միակերպ է լսվում, թէև ձայնը ուժգին կարելի է համարել։ Դիդուրի ոչ միմիկան, ոչ գրիմը, ոչ կոստիւմը, ոչ երգիչ-դերասանին յատուկ առանձնայատկութիւնները չէին համապատասխանում օրիգինալ բասի, հռչակաւոր երգչի փառքին, հանճարին։ Նրա նշանաւոր պլիսը կայանում էր նրանում, որ նա իր դերը կատարեց ամենայն ճշդութեամբ, որ նա՝ հաւատարիմ երաժշտական օրէնքներին՝ կարողացաւ արտացոլել այն բոլորը, ինչ-որ պահանջվում է գործից առհասարակ։

Եւ հէն թատերասէրները, որոնք ատիթ ունեցել են լսելու իտալական օպերայի ռահվիրաներ Տանցինինին, Նավարինինին, Ալբիմոնդիին և այլոց, գտնում են, որ Դիդուր շատ ցածր է կանգնած նրանցից։ Նրանք, այո, զարմանում են, որ Դիդուր ծաղիկ հասակում այն չէ, ինչ որ նրանք են եղել այդ ժամանակաշրջանում։ Եւ որքան վիրաւորական պիտի համարել Դիդուրի համար այն ընդունելութիւնը, որ նա գտաւ Մոսկվայի հասարակութեան կողմից։ Այո, ծանր է տեսնել հասարակութեան այն վերաբերմունքը դէպի Դիդուր, որ նա գտաւ Մոսկվայում։ Աւելի ևս ծանր և վիրաւորական է այն հանգամանքը, երբ հասարակութիւնն երկարատև ծափերով բեմ հրաւիրեց Սօբինովին և տիկ. Սալօնին, իսկ Դիդուրի վերաբերմամբ պահպանեց... զաքարեական պապանձումն...

Ահա թէ որպիսի աննպատակ կարծիք յայտնեց Մոսկվայի մամուլը Դիդուրի մասին, ահա թէ որքան անաջող ընդունելութիւն գտաւ «բասերի թագաւոր» Դիդուր Մոսկվայի հասարակութեան մօտ։

Եւ նա, Դիդուր, որ իրան նպատակ է դրել տապալելու Շալեապինին, նա, որ ամեն ջանք գործ դրեց պատով ու փոքրով կատարելու իր դերը, ի ցաւ պէտք է ասել, որ այդ չաջողվեց իրան։

Ինքը, Դիդուր, խոստովանվում է, որ աջողութիւն չէ ունեցել Մոսկվայում, բայց այդ անաջողութիւնը նա վերագրում է նախ՝ այն ձախորդ պայմաններին, որ տիրում են կայսերական «Մեծ» թատրոնում, և երկրորդ՝ որ նրա անտրեպրենիորը տիպել է իրան 7 օր երգել առանց հանգստանալու։ Նա երգել է այլևս հրապարակ չը գալ Մոսկվայում։ Իսկ այդ ա՞թթէ չէ նշանակում, որ նրա կրած պարտութիւնը կատարեալ է եղել։

Այս բոլորից յետոյ անհրաժեշտ է շեշտել այն զրեղ հանգամանքը, որ ռուսաց շօվինիստ մամուլը ցոյց տուեց Դիդուրի հանդէս գալու առիթով։ Այդ այն է, թէ Շալեապինին տապալելու համար անզօր է ոչ միայն Դիդուր, այլ և ուրիշ նշանաւոր կօրիֆէյներ երաժշտական աշխարհից։

Այնուամենայնիւ չը պէտք է մոռանալ, որ Դիդուր նոյնպէս պատու ոյժ չէ։ Արդարութիւնը ստիպում է խոստովանել, որ Շալեապին և Դիդուր, 2 հռչակաւոր այդ տիտանները, իրանց նշանաւոր և առաջնակարգ տեղն ունեն գրաւած համաշխարհային երաժշտութեան պատմութեան մէջ... Չէ կարելի զրչի մի հարուածով խաչ դնել նրա յայտնի անուան, նրա, ինչպէս կոչել են լուրջ բեկնդեղները, հանճարի վրա։ Դա անարդարութիւն է Դիդուրի վերաբերմամբ... Ոսկու-Զօն

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—

✦ Երէկ Կովկասի Փոխարքայի օգնական սենատոր Վատացին այցելեց Փոխարքայի օգնական գեներալ Շատիլովին և վրաց եկեղեցի պաշտօնական Գրիգորից եպիսկոպոսին, որոնք փոխայցելութիւն տուին սենատորին։

✦ Երէկ, ժամը 2-ին, Թիֆլիսի պարսից ընդհանուր հիւպատոսը այցելեց մեր խմբագրատուն և յայտնեց, որ պարսկական մինիստր-նախագահը և արտաքին գործերի մինիստրութիւնը,—որոնց նա, ընդհանուր հիւպատոսը, հեռագրել էր, թէ Թիֆլիսի հայ հասարակութեան ներկայացուցիչները և «Մշակի» խմբագրութիւնն ևս շնորհաւորել են պարսկական պարլամենտի բացումը,—հեռագրով յանձնարարել են իրան շնորհակալութիւն յայտնել այդ համակրական վերաբերմունքի համար։ Հիւպատոսը յայտնեց, որ պարլամենտի նորընտիր նախագահ միրզա Հասան-խան Մօհթումին-իլ-Միւլքը 31 տարեկան մի երիտասարդ է։ Նա հանգուցեալ սադրազամ Մուշիր-Դովլէի որդին է և եղբայրը Մուշիր-Միւլքի, որ առաջ պարսից լիազօր դեսպան էր Պետերբուրգում։ Նոր նախագահը իր կրթութիւնը ստացել է Լօնդօնում։

✦ Նոյեմբերի 16-ին Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան շէնութեան մէջ հանդիսաւորութեամբ կը բացվի Կովկասեան գիւղատնտեսների համագումարը հետեւեալ ծրագրով. 1) ընկերութեան նախագահ իշխ. Գրուզինսկու ճառը, 2) ընկերութեան պատուաւոր անդամ Ա. Քալանթարի ճառը՝ գիւղատնտեսութեան զարգացման պայմանների մասին, 3) ընկ. քարտուղար Էյրանանի ճառը՝ Անդրկովկասի հասարակական գիւղատնտեսութեան խնդիրները, 4) համագումարի նախագահի օգնականի և երկու քարտուղարների ընտրութիւնները, 5) ընթացիկ հարցեր։

✦ Կովկասի Փոխարքան հնարաւոր գտաւ փոխարինել մահվան պատիժը ցմահ տաժանակիր աշխատանքներով Միխայիլ Շինանէի, Գէօրգի Արսլանէի, Օսման Մեհոզիշվիլու, Ալէքսանդր Գոտիշվիլու, Աբրամ Զօմօկաշվիլու և Սօլոմոն Բախուտաշվիլու վերաբերութեամբ։ Մի ուրիշ գործի առիթով մահվան պատիժը փոխարինված է ցմահ աքսորով Կարապետ Պապլենովի և Գէօրգի Գրատիաշվիլու վերաբերմամբ։ Երրորդ գործի նկատմամբ մահվան պատիժը փոխարինված է 5 տարով տաժանակիր աշխատանքներով Յովհաննէս Մելիք-Թադոսեանի, Եգոր Թէյմուրազովի և Սիմոն Ախալանէի վերաբերմամբ։

✦ Մինիստրների խորհուրդը հոկտ. 27-ի իր նիստում որոշել է օրէնսդրական հաստատութիւնների հայեցողութեանը ներկայացնել այն առաջարկութիւնը, որի համաձայն պետական գանձարանից գումարներ են յատկացվելու 1910—1912 թ. թ. ընթացքում զօրքերի ընակարանների համար հետեւեալ քաղաքներին. Թիֆլիս, Բաքու, Բաթայիս, Երևան, Ալէքսանդրոպոլ, Ախալցխա, Կարս, Գօրի, Գանձակ, Սղնախ, Շուշի, Օրդուբաթ և Օլթի գիւղաքաղաքին։

✦ Վարչական շրջաններում հարց է բարձրացված միացնելու հեռախօսով Թիֆլիսը Բաքուի հետ Գանձակի միջոցով։

✦ Ստացանք՝ 1) Դար. Լեոնեանի «Դիծաղրութիւն և նկարչութիւն» գրքոյկի երկրորդ մասը (հեռանկար). գինն է 35 կոպ.։ 2) Les vepres ciliciennes. Les responsabilités faits et documents. Par M.-er Mouchegh, տպված Ալէքսանդրիայում։

✦ Մէլիքոն Արվէլաձէն խնդրամատոյց է եղել պատշաճաւոր իշխանութեանը, որ թոյլատրվի հրատարակել Թիֆլիսում վրացերէն մի ամենօրեայ լրագիր «Ախալի Սխիվի» անունով։

✦ Կովկասեան զլխաւոր իշխանութեան կարգադրութեամբ դատ է յարուցված Շամախու բերդի նախկին վիրահսկիչ Զաալովի դէմ բանտարկեալ Իբրահիմ Տալիբօղլուն տանց հիմնական պատճառի ազատելուն համար։

✦ Թիֆլիսի քաղ. վարչութիւնը արդէն ստացել է Թիֆլիսում նոր տեղի կատարելագործված սպանդանոց կառուցանելու նախագիծը ինժենէր Պոտէրնիից։

✦ Վլադիմիր Տավրականիին Թիֆլիսի նահանգապետը թոյլատրել է հրատարակել Թիֆլիսում ռուսերէն մի հասարակական-քաղաքական օրաթերթ «Нашъ Край» անունով։

✦ Կովկասեան բարձր իշխանութիւնը թոյլատրել է Կովկասի բժիշկների վրա խաղալ վրացերէն հետեւեալ նոր պիէսները. «Միսս Դօսը» կոմ. 4 գործ., թարգմ. Վ. Դունիայի, «Զրպարտութիւն» դրամա 3 գործ. Էչեգարաս, թ. Գ. Արակելիանի, և «Ներօն»—կօսսի, թ. Գ. Արակելիանի։

✦ Այսօր գիւղատնտեսներ՝ Ա. Քալանթար և Յ. Փիրալեան, իշխ. Ն. Էրիստովի և իշխ. Գուրամօվի հետ կը դիմեն այն քաղաքային հողարաժիններին, որոնք յատկացվելու են փոքրմասնական հրացանավարժութեան համար զինուորական վարչութեանը։

✦ Ինչպէս հաղորդում է «Н. Р.» օրաթերթը, ստորին Իմերէթիայում կանգնած է սովի ուրուականը. գիւղացիները սովից չը մեռնելու համար գիւղերից գնում են քաղաքները։

✦ Տեղեկութիւններ ստացվելով, որ Բօրժոմի գաւառամասի ազգաբնակութիւնը և Գօրու գաւառի Կվիշխէթի, Սուրամի և Մելեսլյովի գաւառամասերի շինական հասարակութիւնները յամառութեամբ հրաժարվում են իշխանութեան ձեռքը յանձնել յայտնի աւազակապետ Տալիսանէի խմբին աջակցութիւն ցոյց առած մարդկանց և որ յիշեալ հասարակութիւնների ընակիչներից մի քանիսը տեղեկութիւններ են հայթայթում յիշեալ աւազակախմբին վարչութեան ժառդութիւնների մասին, Կովկասի Փոխարքան անհրաժեշտ գտաւ նշանակել Ախալգաբա, Նէձվի, Զօչօրակի, Ղվիբսի և Բէլիս-Սազդարի գիւղերում վեց ամիս ժամանակով երկու կառավարական տանուտէրերի՝ չորս պահակներով, կարգադրելով նրանց պահպանութեան ծախքը հոգալ տեղական միջոցներից։ Ընդսմին Փոխարքան թոյլատրեց վերցնել Գօրու գաւառի Ցազվերի, Կիմօտխ-Ուրանի և Մղեթամէ գիւղերում գրված էկզէկուցիան։

✦ Կիրակի, նոյեմբերի 8-ին, երեկոյեան ժամը 8-ին, Ռուսաց Կայսերական Աշխարհագրական Ընկերութեան Կովկասեան բաժանմունքում (Մոսկովսկայա փող. 3) տեղի կունենայ բաժանմունքի անդամների ընդհանուր ժողով, ուր Կ. Սատունինը կը զեկուցէ Սև-ծովի ափերում կատարած իր հետազօտութիւնների հետեանքների մասին։

✦ Վաղը, առաւօտեան ժամը 11-ին, Թիֆլիսի քաղ. վարչութեան մէջ կայանալու է ժուրնալիստների ընկերութեան անդամների (ոչ Թիֆլիսի բոլոր ժուրնալիստների) ընդհանուր ժողով։

✦ Միայն այժմ է պարզվել Լէյլէսի գործարանի հսկայական հրդեհի պատճառած վնասների քանակութիւնը։ Այրվել է 138,000 պուդ նաֆթ, 55,000 պուդ մազութ, 11,000 պուդ կերոսին, 4000 պուդ մեքենայի իւղ, 26,500 պուդ զոլած նաֆթ և գործարանի գոյքը։ Վնասները հասնում են 150,085 ռուբլու։ Գործարանը և ապրանքը ապահովագրված են «Սալամանդրա» ընկերութեան մէջ 120,000 ռուբլով։ Հրդեհի պատճառները ոստիկանական տեղեկութիւններով չէ պարզված։

✦ Կարսում զինուորական նահանգապետ գ.-լ. Ֆօն-Պարկաուի նախագահութեամբ, մասնակցութեամբ նրա օգնական գ.-մ. Հաշիմբէգօվի, ս.-ս. Բօգօսլովսկու, զանազան հաստատութիւնների, հոգևորականութեան, տեղական ընակիչների և շրջանների ներկայացուցիչների, հոկտ. 30-ից սկսվել են զեմստվային խորհրդակցութեան նիստերը Կարսի շրջանում զեմստվո՝ մտցնելու հարցի համար։

✦ Այսօր, նոյեմբերի 1-ին, ցերեկվայ 12 ժամին, Լազարեան ճեմարանի դահլիճում կը կայանայ «առաւօտ», որ նուիրված կը լինի յայտնի հայ գրող Ա. Արովեանի յիշատակին, նրա ծննդեան 100-ամեակի ատիթով։ («Р. У.»)

✦ Մոսկվայի հայերի մէջ վերջերս շատ են խօսում Մոսկվայում ապրող հայ բանաստեղծի մի առաջարկութեան մասին, այն է՝ կազմակերպել «հայկական կարարէ», որը կունենայ որոշ նպատակ, այն է՝ տիպական հայկական կեանքի արտացոլումը։ Ի դէպ պէտք է նկատել, որ այդ «Խարարէն» ոչինչ կապ չունի այս օրերս բացվող հայկական կլուբի հետ, որի կազմակերպողներն են գլխաւորապէս Մոսկվայի խոշոր հայ կապիտալիստները։

Որպէս մենք լսեցինք, «Հայկական կարարէի» համար հայ սկսնակ գրողները գրել են արդէն փոքր մինիատիւրներ։

(«Р. У.»)

✦ Վրիպակ.—«Մշակի» երէկվայ համարի ներքին լուրերի բաժնում, երկրորդ լուրի մէջ, սպրդել է հետեւեալ սխալը. «Կովկասի Փոխարքան թոյլատրել է խաղալ Կովկասի թեմերի վրա Գաբրիել Սունդուկեանի եւ Համլետի 5 գործող. նոր պիէսը». պէտք է լինէր՝ «...բեմերի վրա Գաբ. Սունդուկեանի նաև Համլետի...»։

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

—

✦ Վանից մեզ գրված մի մասնաւոր նամակից իմանում ենք, որ հոկտ. 19-ին այդ քաղաքում, Նորաշէնի եկեղեցում, հոգեհանգիստ է կատարվել Էրզրումի վիլայէթում սպանված Եղիշէ Թոփչեանի, համար։ Սգահանդէսին ներկայ են եղել, ի միջի այլոց, երիտ-թիւրքական Իթթիհատ-Թէրաքկի կուսակցութեան Վանի կոմիտէի անդամները, ինչպէս և Վանի վալի Բէքիր-Սամի բէյի ներկայացուցիչը։ Արտասանվել են մի քանի ճառեր, որոնցով բնորոշվել է հանգուցեալի գործունէութիւնը։ Սգահանդէսի վրա գրվել են մի քանի պսակներ ծանօթների, տեղական կանանց Միութեան, «Յորձանքի» խմբագրութեան, Սանդխտեան ուսումն. աշակերտուհիների և փուռերի աշխատաւորների միութեան և այլոց կողմից։ Սգահանդէսից յետոյ ցաւակցական հեռագիր է ուղարկվել հանգուցեալի այրուն։

✦ Զէյթունի առաջն. փոխանորդը հոկտ. 17-ից հեռագրում է Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին, որ այդ քաղաքի ազգ. ուսումնարանները, նիւթական բացակայութեան պատճառով, փակվել են, իսկ զբաղրոցական մանուկները արձակվել են ու անուսում են մնում։ Միացեալ Ընկերութիւնը Զէյթունում ուսումնարան բանալու գործին դեռ ևս չէ ձեռնարկել։

✦ Ադանայից գրում են «Բիւզանդիոնին» հոկտեմբերի 14-ից հետեւեալը. «Կիլիկիոյ կաթողիկոսը հոկտ. 9-ին Սիսէն հոս եկաւ, հետն ունենալով Հրանտ և Կիրակոս վարդապետները։ Նորին ս. օծութիւնը այցելեց կուսակալին, որ կաթողիկոսին փոխադարձ այցելութեան եկաւ։ Կաթողիկոսն հոկտ. 11-ին, ի ներկայութեան երկսեռ բազմութեան, քարոզ մը խօսելով յորդորեց ժողովուրդը, որ հայասա. ս. եկեղեցիէն չուծանայ և զղուշանայ ոեէ կրօնքի հետամուտ ըլլալէ։ Կաթողիկոսը իր քարոզով խոր ապաւորութիւն ձգեց ժողովրդեան վրայ»։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Նոյեմբերի 5-ին Արտիստական թատրոնում խաղացվեց Օստրովսկու 5 գործ. «Անտառ» կոմեդիան։

Ռուս մեծ գրողի ստեղծագործութիւնները դեռ այժմ ևս չեն կորցրել իրանց կենսունակութիւնն և այժմէութիւնը, գտնելով հասարակութեան մէջ լուսն գրած նախապաշարմունքների և հնի կալտի երկրպագութեան արամադրութիւն ունենալու տեսակէտից, հանդէպ այն ամենի, որ նոր է, թարմ ու ժամանակակից։

Իրաւ է, «ակտիօրները» ռուսական իրականութեան մէջ ներկայումս չեն հաղածվում, քաղցած, ծարաւ և ոտքով չեն թափառում, այլ գնահատվում ու վարձատրվում են, սակայն մթթէ քիչ են այնպիսի նոր երևոյթներ հասարակական ներկայ կեանքում, որոնք նոյնպէս ենթակայ են ամեն տեսակ հալածանքների։

Խաղը շատ կենդանի կերպով անցաւ։

Կաշիրինա (Բարբարա Պաւլովնա), Սարնիցկայա (Ակսիւշա) շատ լաւ էին ըմբռնել իրանց դերերը և ամենայն աջողութեամբ կատարեցին նրանց։

Բէլաեւ (վաճառական), Դաւիդօվ (Բուլանօվ) և Կրաչցով (Նէչաստլիվցեվ) շատ տիպիք կերպով արտայայտեցին իրանց դերերը, իւրաքանչիւրը զանվելով իր տեղում։

Մեր հիացմունքն ենք յայտնում Զինովվիեվին (Աչաուլիվցեվ) իր անմոռան խաղի համար։ Միասնորը նոյնպէս լաւ տարան իրանց դերերը։ Ներկայացումը դրաւել էր քիչ հասարակութիւն։

Ամսիս 12-ին տեղի կունենայ յայտնի դերասան Բարատովի բենեֆիսը։ Խաղալու են առաջին անգամ Անդրէեվի «Անֆիսա» ողբերգութիւնը։ Խօսք չը կայ, որ հասարակութիւնը ըստ արժանւոյն կը վարձատրի իր սիրած արուեստագէտին։

Յ. Դաս-եան

—

Հինգշաբթի, նոյեմբերի 5-ին, ռուսաց օպերային խումբը երկրորդ անգամ ներկայացրեց «Մադամ Բատտէրֆլէյ» օպերան, որ անգամին բաւականութիւն էր գրաւել թատրոն։ Այդ օպերան գրել է Ջակօմօ Պուչչինին, «Բոհեմա» և «Տօսկա» օպերաների հեղինակը։ Նիւթը վերցված է Եապոնայից։ Էութիւնը՝ եապոնական և եւրոպական հասկացողութիւնների կօլիզիան է, որից առաջ է գալիս դրամա։ Մի ամերիկացի երիտասարդ, ծովային օֆիցէր, ապրելով Նագասակի քաղաքում, ըստ եապոնական սովորութեան, ժամանակաւորապէս ամուսնանում է Զօ-Զօ-Սան անունով մի գէյշի հետ, որին եապոնացիները կոչում են «Մադամ Բատտէրֆլէյ»։ Նա սիրող և փափուկ սիրտ ունի և Ջերմագին սիրում է իր ամուսին Պինկերտօնին (երիտասարդ օֆիցէրին), որից ունենում է մի տղայ։ Բայց Պինկերտօնը վերադառնում է Ամերիկա և այնտեղ ամուսնանում է, իսկ խեղճ Զօ-Զօ-Սանը սպասում է նրան և, երբ իմանում է ճշմարտութիւնը, ինքնասպանութիւն է գործում։

Երաժշտութիւնը շատ գեղեցիկ և յատկէ կողմներ է բովանդակում։ Տեսարանները, եապոնական կեանքից, շատ բնական են և պատկերացնում են հանդիսականների առաջ բոլորովին նոր աշխարհ։

ՄԱՄՈՒԼ

Անբարեխղճութիւնը, փաստերի յեղաշրջումը և կեղծ դատաւորումը կազմել է միշտ «Մշակի» հակառակորդ պահպանողական-կղերական թերթերի յատկութիւնը։ Ներկայումս նոյն շաւղով ընթանում է «Հովիւ» կղերական թերթը և եթէ մենք այսօր խօսում ենք նրա մասին, որովհետև անբարեխղճութեան և փաստերի զիտաւորեալ յեղաշրջման մի նոր ապացոյց տալիս է մի անձն, որից, ճիշդն ասած, այդ տեսակ վերաբերմունք չէինք սպասում, որից իրաւունք ունէինք ակնկալել բարեխղճութիւն։ Այդ անձը Գ. Ենգիբարեանն է, որ «Հովիւ» թերթի № 38-ի մէջ «Իմ կարծիքները» վերնագրով յօդուածում հետեւեալ խօսքերն է ասում «Մշակի» հասցէին։

«Մշակը» մի ժամանակ առաջադիմական լրագիր էր, գրում էր միշտ հայ հոգևորականութեան դէմ, հերքում էր կրօնի եւ եկեղեցու նշանակութիւնը։ Սա մի 15 տարի առաջ էր։ Այժմ «Մշակը» յիսդիմութիւն է անում, պաշտպանում է հոգևորականութեան նոյն իսկ սխալները»։

Շատ հետաքրքրական էր իմանալ, թէ «Մշակի» որ տարվայ որ համարում այդպիսի միտք է յայտնված, այսինքն «Մշակը» ե՞րբ է հերքել «կրօնի և եկեղեցու նշանակութիւնը»։ Արդեօք Գ. Ենգիբարեանը բարի չի՞ լինի գտնէ մի համար ցոյց տալ, որ մենք ևս իմանայինք, քանի որ նա այնքան սուր յիշողութիւն ունի, որ ասում է, թէ «ես այս կապացուցանեմ թերթի համարներով»։ «Մշակը», թէ Գ. Արծրունու օրով և թէ նրանից յետոյ, երբէք չէ հերքել եկեղեցու նշանակութիւնը, այլ պաշտպանել է բարենորոգութեան կարիութիւնը։

Միւս կողմից՝ շատ ծիծաղելի է, որ կրօնական և քահանայի ձեռքով հրատարակվող թերթը առաջադիմութիւն է անուանում այն, երբ հերքում են կրօնի և եկեղեցու նշանակութիւնը։ Այդ դէպքում անհասկանալի է մնում, թէ ինչու է հրատարակվում այդ թերթը քահանայի ձեռքով։

Կը սպասենք որ Ենգիբարեանը ցոյց տայ «Մշակի» համարները։

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Երևան, 4 նոյեմբերի

Բաթումից եկած մի թիւրքիացի ինձ ասաց, որ իմ նախկին գործակատար Թիւրքիացի Վահան Նալբանդեանը իր մի քանի ընկերների հետ խեղդվել է Բաթումի ժամ Սև ծովում։

Սրանով յայտնում եմ ի գիտութիւն հանգուցեալի ծնողների և եղբայրների, որոնց հասցէները ինձ անյայտ են, որ Վահան Նալբանդեանը Երևանից հեռանալու ժամանակ թողել է ինձ մօտ մի քանի գրքեր-փոխանակագրեր իրանց առևտրական ասն վերաբերեալ։ Իմ հասցէն՝ Кавказъ, гор. Эривань, Александръ Акопьянцъ.

Աղէքսանդր Յակոբեանց

—

Թիֆլիս, 29 հոկտեմբերի

Թիւրիմացութիւններին և նոյնիսկ անարժութիւններին վերջ տալու համար, ես ստիպված եմ յայտարարելու ի գիտութիւն հայ թատերասէր հասարակութեան, գաւառական թղթակիցներին և ծանօթներս, որ ես այս տարի ծառայում եմ Թիֆլիսի գրամատիկ ընկերութեան դերասանական խմբում։ Ես մտադրութիւն չեմ ունեցել դերասան Յ. Աբելեանի խմբի հետ շրջելու։ Ծանուցանելով այս՝ խնդրում եմ գաւառական թղթակիցներին, նամանաւանդ Պարսկաստանի և Թիւրքիայի թղթակիցներին, ուր ես դեռ չեմ գործել, չը շփոթեն ինձ իմ ազգանունս կրող մի ուրիշ

դերասանին, որ վերջին երկու թէ երեք տարի է, ինչ երևացել է հայ բեմի վրա։

Դերասան Իսահակ Ալիխանեան

—

Թիֆլիս, 30 հոկտեմբերի

Խորապէս զգայուելով Գր. Զալխուշեանի՝ «Մշակի» էջերից հայ մանուկներին արած կոչից, մենք, երկաթուղու մի խումբ հայ բանուորներս, ուղարկում ենք մեր սրտից բղխած՝ դառն քրտինքով վաստակած՝ հաճեստ նպաստը, 15 ր., յօգուտ Ադանայի բաղմատանջ մեր երկրագործ եղբայրների ընտանիքներին և զաւակներին, որոնք տառապում են բացօդեայ, մերկ և քաղցած, թափառելով իրանց աւերակների շուրջը։ Դաժան ձեռքը չը խնայեց և սրախողխող արեց նրանց անմեղ սիրելիներին։

Թէև այս փոքրիկ նպաստով ոչինչ չի լինի, բայց և այնպէս մենք մեր վաստակած ցամաք հացի մի մասը տալիս ենք քաղցածներին. թող սա օրինակ լինի շատերին, որոնք չեն ցանկանում իրանց ճոխ սեղաններից բաժին հանել թշուառներին։ Ասված է. «Մեծ ծովում մի կաթիլ ջուր». բայց չէ՞ որ կաթիլներից ծովեր են գոյանում։

Սրանով խնդրում ենք յարգելի խմբագրութիւնդ տալ մեզ 3 օրինակ Գ. Զալխուշեանի գրքերից, որով դուք և բարոյապէս վարձատրած կը լինէք մեզ բանուորներիս։

Մի խումբ բանուորներ

—

Թիֆլիս, 29 հոկտեմբերի

Խոնարհաբար խնդրում եմ մի փոքրիկ տեղ տաք ձեր յարգելի լրագրի մէջ, որպէսզի յայտնեմ իմ խորին երախտագիտութիւնը նախ Սեբաստիոն Կօրխանէգիին (Ազգ-Դէօնական բանկի պաշտօնեայ), որ ցաւակցաբար վերաբերվելով դէպի իմ վերին աստիճանի թշուառ և անբնական դրութիւնը՝ հանդանակութեան դիմից և դրանով հնարաւորութիւն տուից ինձ դուրս գալ վատ դրութիւնից և վերադառնալ հայրենիք, Կ. Պոլիս, նոյնպէս և իմ շնորհակալութիւնը այն բոլոր անձանց, որոնք մասնակցեցին այդ հանդանակութեան։

Մխակ Թօփիկեան

ԱԴԱՆԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԱՐԶԱԴԱՆՔԸ ՀԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՍԻՐՏԵՐՈՒՄ

—

Երևան, 26 հոկտ.

Մի քանի օր առաջ «Մշակի» №№-ից մէկում կարդալով Գր. Զալխուշեանի յօդուածը, ուր Ադանայի սոսկալի գազանութիւններից որբացեալ մանկանց վիճակի մասին կոչ էր արված հայ մանուկներին, ես հետաքրքրվեցի իմանալ, թէ ինչ պատասխան կը տայ մանկան քնքոյշ և անմեղ սիրտը, աշխարհի այդ ոճիրների ամենամեծին, մեծագոյնին ենթարկված անմեղ արարածների վիճակի մասին։

Երեկոյ էր. երեխաներս, բոլորված սեղանի շուրջը, թէյ էին խմում, երբ ես բաց արի «Մշակի» այդ №-ը և, հրաւիրելով նրանց ուշադրութիւնը, սկսեցի կարդալ։

Նրանք, որոնք ընդունակ էին հասկանալու յօդուածը ամբողջովին, խորը խոցոտված սրտով, զգաստացրին թէյ խմելը, և ես նրանց ճակատին կարդացի սաստիկ ցաւից ճմլվող անմեղ սրտերի յուզմունքը, ափսոսութիւնը։

Միւսների թերի հասկացածը ես լրացրի բացատրելով ամփոփ բովանդակութիւնը։

— Հայրիկ, ինչո՞ւ սպանեցին այդ երեխաների ծնողներին. իսկ երբ որ սպանում էին ծնողներին, ինչո՞ւ համար չը սպանեցին նաև երեխաներին. թող նրանց էլ սպանէին, որովհետև առանց ծնողների էլ ինչի՞ պէտք էին այդ խեղճ երեխաները,— հարց տուեց 10 տարեկան մեծ աղջիկս։

Ես, ի հարկէ, զոհացում տալով նրանց հարցերին, պահանջեցի, որ նրանցից ամեն մինը իր ունեցածից մի բան բաժին հանի նրանց համար։

— Բայց, հայրիկ, մենք ի՞նչ ունենք որ ի՞նչ տանք։

— Մտածեցէք և վճռեցէք ձեր մէջ, թէ ի՞նչ ունեք և ի՞նչ կարող եք տալ։

Երեխաները միմեանց հետ մտքերի փոխանակութիւնից յետոյ՝ եկան հետևեալ եզրակացութեան։

Փոքրիկ Ցոլակը հրաժարվում էր իր խաղալիքներից. աղջիկս միւսների հետ վճռեց 10 օր կերակուր չուտել և բաւականանալ միայն հաց ու պանրով. Թամիկը խնդրեց, որ իրան թոյլ տան դաշտ էլ ուտի. իսկ Ցոլակը պահանջեց, որ թէյ տան իրան, որովհետև առանց թէյի չէ կարող մնալ։

Սրանց խօսակցութեան ժամանակ ներկայ էր նաև նաժիշտը, օր. Մարիւսան, ուստ, որը դարձեալ վճռեց ոչինչ չուտել և մասնակցել այդ հանդանակութեանը։

Իսկ ծառան, աւելի յուզված, «աղա,—ասաց,—ես 20 օր էլ պաս կը պահեմ, միայն իմ կողմից մի բան տուած լինեմ»։

Այդ արտասովոր, բայց ի սրտէ արված փոքրիկ զոհաբերութիւնից գոյացած այս 5 ռուբլին ուղարկում եմ խմբագրութիւնդ՝ տարաբաղդ ադանայի որբերի համար։

Հ. Ա. Գաբրիէլեանց

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԴԱՆԳԱՏԸ ԵԳԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ԴԷՄ

—

Ֆրանսիայի ուսուցիչների և ուսուցչուհիների դաշնակցութիւնը, որի կազմի մէջ մտնում են մօտ 100,000 ժողովրդական ուսուցիչներ, որոշեց դատ սկսել փրանսիական այն եպիսկոպոսների դէմ, որոնք սորագրել են հաւատացեալ կաթոլիկներին ուղղած առաքելական թղթի՝ ծնողների իրաւունքների և պարտաւորութիւնների մասին զրոյցի վերաբերմամբ։ Վերոյիշեալ դաշնակցութեան անդամներն իրանց վիրաւորված են զգում եպիսկոպոսների յարձակումներից իրանց վրա, որպէս անարժան դաստիարակիչների վրա, և ցանկանում են դատարանի օգնութեամբ ապացուցանել եպիսկոպոսների մեղադրանքների ստութիւնը։

Դատ սկսելու որոշումն ընդունեց դաշնակցութիւնը հոկտ. 16-ի նիստում, որին մասնակցում էին յայտնի իրաւաբաններ։ Վիրաւորված ուսուցիչները ցանկանում են պարզել դատարանում՝ թէ որպիսի պայմաններում նրանք ստիպված են կռիւ մղել կղերականների դէմ, որոնք ամեն կերպ խոչընդոտներ են հանդիսանում նրանց բարձր միսսիայի դէմ։ Պրօկուրօրին տրված զանգատի մէջ մատնացոյց է անվում, որ առաքելական կոչը շատ է տարածվել երկրում, որի մէջ ասված է, որ իբր թէ աշխարհական գլխաւորների ուսուցիչները պակասում են երեխաներին, որ իբր թէ նրանք ծանօթացնում են երեխաներին անբարոյական թէօրիաների հետ, արմատացնում են նրանց մէջ թշնամութիւն դէպի հայրենիքը և այլն։ Այդ ստութիւնները նիւթական և բարոյական վնաս են հասցնում Ֆրանսիայի ժողովրդական ուսուցիչներին։

Ըէնի արքեպիսկոպոս Դիւբուը յայտնեց «Matin» լրագրի աշխատակցին, որ եպիսկոպոսները ոչինչ երկիւղ չունեն ապագայի վերաբերմամբ։ Նրանք ամենևին չեն փոշմանում, որ կոչով դիմեցին կաթոլիկներին։ Եպիսկոպոսը հերքում է մամուլի մէջ երևցած այն կարծիքը, որ իբր թէ այդ թուղթը գրված է Վատիկանի ներշնչմամբ։ Եպիսկոպոսի խօսքով, Բրիանն է խորհուրդ տուել ուսուցիչներին այդ տակտիկան, որը ցանկանում է ցոյց տալ, որ դպրոցը պաշտպանում են ոչ միայն պետութիւնը, այլև ուսուցիչները։

ՊՐՕՖԵՍՈՐ ԼԷՅԴԷՆ ԵՒ ԲԺՇԿԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒԹԻՒՆԸ

—

Բերլինի և Վիէննայի գիտական և բժշկական շրջաններում ահագին ցնցում առաջացրեց այս օրերս Բերլինի փողոցային թերթերից մէկի հաղորդած այն լուրը, թէ պրոֆեսոր Լէյդէն, անկասկած հռչակաւորագոյնը գերմանական ժամանակակից կլինիկիստներից, հեռացված է իր պաշտօններից և ենթարկված է կարգապահական դատի։

Այդ լուրը կապ ունի այն սկանդալի հետ, որ տեղի ունեցաւ Բերլինի բժշկական շրջաններում ներկայ տարվայ գարնանը։ Այդ սկանդալի մէջ մասն ունեն բժշկական գիտութեան այնպիսի աստղեր, որպէս են պրոֆեսորներ Սենատոր, Լէյդէն, Պէյէնէր, Էվալդ և ուրիշները, և որի մէջ ակտիվ, թէև կատարեալապէս անպատասխան դերը պատկանում է մեր հայրենակիցներին, այն է բժշկապետ Լիպլեավսկու հիմնած «ռուսական ինստիտուտին՝ բժշկական խորհուրդների համար»։

«Ինստիտուտի» գործունէութիւնը սկսվեց, ինչպէս պարզվեց վերջում, կատարեալապէս բաւարար հիմքեր այն լուրերի համար, որ մի կողմից ռուս բժիշկները, որոնք մտնում էին ինստիտուտի կազմի մէջ, խորհուրդ էին տալիս հիւանդներին Ռուսաստանից գիմել գերմանական բժշկական գիտութեան այս կամ այն աստղին, զեկավարվելով ի հարկէ ոչ անշահասէր խորհրդածութիւններով, և միւս կողմից՝ որ Բերլինի բժշկական գիտութեան ներկայացուցիչները կատարեալապէս գիտակցաբար պաշտպանում էին ինստիտուտի ֆակտորական գործունէութիւնը համապատասխան հանօրարներով։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այդպիսի լուրերը անհետևանք չէին կարող մնալ։ Նրանք ահագին յուզմունք առաջացրին Բերլինի բժշկական շրջաններում և հիմք ծառայեցին Բերլինի համալսարանի բժշկական ֆակուլտէտի համար քննելու այդ լուրի ճշգրտութիւնը։

Պրոֆեսոր Սենատոր անկեղծօրէն խոստովանեց, որ ինքը վարձատրութիւն էր տալիս այն անձանց, որոնք հիւանդներ էին բերում իր մօտ։ Այդ խոստովանութիւնից յետոյ նա ստիպված եղաւ հրաժարվել Բերլինի բժշկական ընկերութեան նախագահի պաշտօնից։

Հաւատացնում են նոյնպէս, որ բժշկական ֆակուլտէտի մօտ 15 պրոֆեսորներ և պրիվատ-դոցէնտներ մերձաւոր ապագայում պէտք է այդ առիթով հաշիւ տան իրանց գործունէութեան մասին համալսարանական սենատին։ («Б. В.»)

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

5 նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ (Ուշացած)։ Նշանակվում են Բաշի գեներալ-հիւպատոս Շարիպէրը և Պէկիրի միսսիայի առաջին քարտուղար Արսենիէվը՝ գեներալ-հիւպատոսներ—Շարիպէրը՝ Էրզրումում, Արսենիէվը՝ Բօմբէյում. Տօկիօի դեսպանատան առաջին քարտուղար Կօզակօվը—արտ. գործ. մին. խորհրդատու, Կ. Պօլսի դեսպ. երկրորդ քարտուղար Շչէրբացկին—Տօկիօի դեսպ. առաջին քարտուղար։ Թէհրանի միսսիայի առաջին քարտուղար Սաբլինին յայտնված է բարձրագոյն շնորհակալութիւն։

Խօլբասով հիւանդացան 3, մեռաւ 1։

«Передъ рѣшеніемъ» յօդուածի համար «Рѣчь»-ի խմբագիր Եվին ենթարկվեց 1000 ռուբլի տուգանքի։

ՍԱՄԱՐԱ։ Մեկնեց ֆինանսների մինիստրը։

ՐԻԳԱ։ Պետերբուրգի դատաստանական պալատի առանձին նստաշրջանը երկօրեայ քննութիւնից յետոյ 1903 թ. Բիլա-Դրլով երկաթուղային գործադուլի գործի առիթով դատապարտեց 61 հոգու բանտարկութեան զանազան ժամանակներով, 38-ին արդարացրեց. 8-ը փախել էին։

ՄՕՍԿՎԱ։ Քաղաքային դուման որոշեց միջնորդել հրատարակելու մի օրէնք պարտադիր ընդհանուր ուսման մասին։

ԽԱՐԿՕՎ։ Դատաստանական պալատի կարգադրութեամբ դիսցիպլինարնի դատարանին յանձնվեց երդս.-հաւատարմատարների Խարկովի խորհուրդը պալատի դեպարտամենտի նախագահի վարմունքը դատարանում գնահատելու համար։

ՕՐԱՆԻԵՆԲԱՈՒՄ։ Բոլոր տեսանելի տարածութիւնը ծածկվեց սառոյցի բարակ շերտով։

ԿՈՊԵՆՀԱԳԷՆ։ Երէկ երեկոյեան մեկնեց Թագաւորը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ԲԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏԵՐԸ
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Յ. Մ. ԿԷՕՆՃԵԱՆ—առաւեաթոյժ—8½—11½ ժ., պլօմբներ և արհեստական ատամներ։
Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—9½—11 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթուվեներ., վիրաբուժութեան և մեղասեռ. հ.։
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
Օ. Վ. ԴԵՅԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԵԼ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Օ. Վ. ԴԵՅԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԵԼ—6—6½ ժ մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
Վճարը 50 կ. Զբաղարիները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿ
Խ. Բ. ՄԵԼԻՔ-ԷՅՆԱԹԵԱՆ
Մասնագէտ սիֆիլիս, վեներական, միզասեռական և կաշու հիւանդութիւններու։ Հիւանդների ընդունելութիւնը՝ առաւօտ. ժամը 9-ից մինչև 10-ը, երեկոյեան ժամը 5-ից մինչև 7-ը։
Կոլենկովսկայա փ., № 6, «Վէացէլ» հիւրանոցի մօտ։ (Ա. հ. շ.) 955. 100—21

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Ներքին եւ երեխայոց հիւանդութիւններ առանձնապէս ՍՏԱՄՈՔԻ և ԱՂԻՔՆԵՐԻ հիւանդութիւններ։
Ընդունելութիւն ամեն օր { 12—1 ժ. առաւ. 5—6 ժ. երեկ.
Միքայէլեան փող., № 36, տ. Ճաւճանիձէի։
(օ. մ.) 100—32

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Սիֆիլիս, միզասեռական, վենեական և կաշուի հիւանդութիւններ։
Ընդունելութիւնը
ամեն օր { առաւօտեան ժ. 12½—2. երեկոյեան ժ. 5—7.
Կիրակի օրերը միայն առ. ժ. 9—11.
Հասցէն՝ Սօլոլակ, Բէհրութեան փ., № 33.
(տ. օ.) 1044. 100—28

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
Ներքին և ջղային հիւանդութիւններ։
Ընդունելութիւնը
ամեն օր { առաւօտեան 9—12 ժ. երեկոյեան 5—7 ժ.
Միքայէլեան փողց, № 27.
(տ. օ.) 1087. 100—19

ՄԵԳԻՑԻՆԱՅԻ
ՖԻԼԴՇԵՐ-ՄԱՍՍԱԺԻՍՏ
Յ. Գ. ԵՍԱՅԵԱՆ
Բժիշկների որոշմամբ կատարում է կաշուի տակ սրսկումներ, լուսացումներ (спринцов.), վերքի փաթաթումն, գեղերի քսումն (втираніе) հայտնի էլեեtrական լեմպամարմի, պարալիչի, սեռական անկարողութեան և թուլութեան դէմ։ Մասսաժ էլեքտրական գործիքով և ձեռքով. մասնաւոր և ընդհանուր մասաժ։ Բժշկական մարմնամարզութիւն, ծաղկահատութիւն։ Օտարերկրեայ հիւանդներին ցոյց է տալիս մասնագէտ հմուտ բժիշկների։ Տալիս է այլ և այլ բժշկական-առողջապահական խորհուրդներ։ Կարելի է և գալուց, ներկայանալով վարձատրութիւն ըստ կարողութեան։ Ընդունելութիւնը 3—4 ժամը։ Семеновская ул., № 9, Վօրոնցովի կամուրջին մօտ։
(օ. մ.) 857. 0—25

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Զորս տարվայ փորձառութիւն ունեցող

ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ

ձեռնտու պայմաններով տեղ է փնտռում հայոց դպրոցներում։ Ուսանում է հայերէն, թուրքերէն, ռուսերէն, ձեռագրել, նաև կար ու ձև։ Դիմել՝ Тифлисъ. кіоскъ «Паросъ» (Эриванская пл.) Ն. Մատինեանին։
(շ. ե.) 1205. 2—1

ՄԻ ՓՈՐՁՎԱԾ

ՎԱՐԺՈՒՀԻ

կամենում է հայոց լեզուի դասեր ունենալ ընտանիքում։ Կարող է և պարապել փոքրահասակների հետ մանկական պարտիզի պարապմունքով։ Կարելի է տեսնել երեկոյեան ժամը 3-ից մինչև 5-ը, ул. Броссе, 5.
(օ. մ.) 1167. 6—4

ՀՕՆՕՐԵԻ (ՏՐԻՊՊԷՐ) ԴԷՄ
ՆՈՐ-ՄԻՋՈՑ
„SALO — ՊԻՇԻԼԻՆ“
նեղգործում է արագ և արմատականապէս, և բժիշկների վկայութեամբ համարվում է իրրև հաստատուն միջոց։ Դործադրելու ձեռնարկը կցված է արկղիկին։ Իսկականը մետաղեայ արկղներում, հատը՝ 1 ր. և 1 ր. 80 կ.։
Միաժամանակ լաւ է երգարձում թէ սուր եւ թէ արաեւ բնոյթ ունեցող դեպքերում եւ կարճ ժամանակի ընթացքում վերացնում է ամենայատաւ ընթացքը։
ՊԱՏՎԻՐԵՔ Петербургъ, Разъѣзжая ул., № 7, аптека Б. Конгейма.
Ուղարկվում է վերադիր վճարով։ Ձեռնարարհամարը պօստային սակագնով։
Գտնվում է Կովկ. Ընկ. գեղային ապրանքների վաճառանոցում։
(շ.) (П. 124817) 540. 0—7

Հրաւէր

Ամսիս 8-ին, կիրակի, ժամը 12-ին Շամքորեցոց եկեղեցում լինելու է ծխականների առաջին ընդհանուր ժողով՝ ընտրելու երեցփոխ և 2—4 հոգաբարձուներ նոյն եկեղեցու ծխական դպրոցի համար. ուստի սրանով խնդրում եմ յիշեալ եկեղեցու չափահաս ծխականներին որոշեալ ժամին շնորհ բերել եկեղեցի՝ ընտրութեանը մասնակցելու։

Գործակալ՝ Դաւիթ քահ. Մատիկոնեանց
(ու. շ.) 1201. 2—2

ՀԱԶԻԱԳԻՒՏ ԴԷՊՔ!
7 ր. 25 կ. ձմեռային երկու զգեստ.
ԱՆԳԼԻԱԿԱՆ «ՏՐԻԿՕ»—բրդէ ամուր և մօդային կտոր, 2 արշ. լայն., 4¼ արշ. երկար., տղամարդկ. զգեստի համար, և 8 արշ. տրիկօ «ՊԱՆԱՄԱ»—կանանց ամուր և էլեգանտ զգեստի համար։ Հանդերձ պօստային ճանապարհածախքով։ Առանց կանխավճարի և ռիսկի։ Զը հաւանած դէպքում ֆաբրիկան փողը լրիւ վերադարձնում է։ Հասցէագրել՝ Въ фабрику А. КИВМАНА, ЛОДЗЬ. Г.
Թղթակցութիւնները ռուսերէն։
(շ. հ.) (В.71349) 1203. 2—1

«ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ»
գրավաճառանոցում վաճառվում են.
«Փոթորկից առաջ», Ա. Յովհաննիսեանի 1 ր.
«Կարմիր լուրեր բարեկամէս», Ա. Երճանեանի. 35 կ.
«Կատակերգութիւնք», Մոլիէրի, թարգ. Նուարեանի. 2 հատոր 5 ր. 40 կ.
«Եփրեմվերզի—Երազանք», Մանդաքունու, կազմած 5 ր.
Օրացոյցներ ծոցի (բոլոր հրատարա-) 20 կ.
Օրացոյցներ պատի (կութիւններից) 50 կ.
Ռուսերէն օրացոյցներ, պատի և ծոցի սկսած 25 կ.
«Ազատարար շարժուն բանակին յաղթական մուտքը ի Պոլիս», պատկերազարդ լիակատար հաւաքածու Պոլսոյ դէպքերու պատմութեանց 1 ր. 50 կ.
«Աղքատերը ձրմուներ», թարգ. Թաթանեանի 10 կ.
«Ռուսահայ բառարան», Դաղբաշեանի 8 ր.
«Խեղճերը», Անարոնեանի 75 կ.
«Ռուսահայ բառարան». Յ. Թումանեանի 75 կ.
«Պատմութիւն պղնձէ քաղաքի», նոր տիպ 50 կ.
«Մանկական պարտէզ» իշխ. Արղութեանի 3 ր.
«Ուղղագրական բառգրքոյկ», Ա. Աբեղեանի 30 կ.
«Հայոց նոր վկաները», Մանանդ. և Ա.ճառ. 3 ր.
«Հայերէն նամակագրութեան ձևերը», Ազանեանի 60 կ.
«Պատմութիւն քաղաքակրթութեան», թարգմ. Նուարեանի 1 ր.
«Տնային բժշկարան», հրատ. բժ. Բաբեանի 2 ր. 60 կ.
«Մոլլա-Նասրէդինի առակներ և Հորոս», 30 կ.
«Կաթնատնտեսութիւն», թարգմ. Մխիթարեանի 50 կ.
Դեպցուցակը ուղարկվում է ԶՐԻ։
(օ. մ.) 1191. 2—2

ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՐԷԶԻՆԻ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ТРЕУГОЛЬНИКЪ
ՖԻՐՄԱՅՈՎ
Ա.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ.
ՐԷԶԻՆԻ ԵՐԿԱՐ ՓՈՂԵՐ.
ՐԷԶԻՆԻ ԵՒ ԿԱՆԵՓԻ ԹԵԼԵՈՅՆԵՐ.
ԱՍԲԵՍՏԻ ԳՈՐԾՈՒԱԾՔԵՐ.
ԱՍԲԵՍՏԻ ՍՏՈՒԱՐԱԹՈՒՂԹ.
ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ.
ԾԱԾԿՈՅՆԵՐ ԵՒ ՎԵՐԱՐԿՈՒՆԵՐ.
ՐԷԶԻՆԱՊԱՏ ԿՏՈՐՆԵՐ.
ԵԾԱՆԻՒՆԵՐԻ ՇԻՆԵՐ ԵՒ ՊԻՏՈՅՔՆԵՐ.
ՐԷԶԻՆԻ ԽԱՂԱԼԻՔՆԵՐ.
ԽԱՂԱԳՆԴԱԿՆԵՐ.
ՐԷԶԻՆԻ ՄԻԱԳՈՅՆ ԿՏՈՐՆԵՐ.
ԿՐԿՆԱԿՈՇԻԿՆԵՐ.
ՐԷԶԻՆԻ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՊԱՐԱԳԱՆԵՐ.
ՆՈՅՆԸ ԵՂԶԻՒՐԱՅԻՆ ՐԷԶԻՆԻՑ.
Խնդրում ենք ուշադրութիւն դարձնել այս կէտերի վրա։
1860.
Т.Р.А.Р.М.
С.ПЕТЕРБУРГЪ.
Տեղեկութիւնների և պատուէրների համար խնդրում ենք դիմել՝
Въ Тифлисское Отдѣленіе Т-ва „ТРЕУГОЛЬНИКЪ“
ԹԻՖԼԻՍՈՒՄ
ԵՐԵՒԱՆԵԱՆ ՀՐԱՊԱՐ. Տ. ՎԱՐԿԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ.
Պրէյս-կուրանտները ըստ առաջին պահանջման ուղարկվում են ձ ր ի։
(շ.) 896. 0—5

Электропечатня Ав. Мугдусіакопова съ С-ми. Большая Ванкская № 3.